Azg
Azg
armenian daily

Սեպտեմբեր 10 Ուրբաթ 1993

ՈՒՍԿՍՎԱՐ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹ
Գ տարի, թիվ 174 (425)
գինը՝ 10 ռ.
դասիչ 69149
Երեւան 375010
Հանրապետութեան 47
հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

Երջանկ

Ադրբեջանցիների համար ճամբարը կկառուցվի Իմիջլի քաղաքի մոտ

Իրանը որոշվիրակություն է ուղարկել Ադրբեջան, այսպես կոչված ադրբեջանցի փախստականների ճամբարի ստեղծմանը հետեւելու համար. Նիկոսիայից հաղորդում է Ռոյթը գործակալությունը, վկայակոչելով Իրանա գործակալության տեղեկությունները: Ադրբեջանի իշխանությունների խնդրանքով ստեղծվող եւ 100 հազար փախստականների համար նախատեսված ճամբարը կկառուցվի Իմիջլի քաղաքի շրջանում Բաքվից 180 կմ հարավ-արեւմուտք եւ Իրանի սահմանից 20 կմ հեռու: Պատվիրակության կազմի մեջ են Կարմիր մահիկի իրանական ընկերության եւ որոշ նախարարությունների ներկայացուցիչներ:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Ամփոփագիր

Միացյալ նախագիծը ստորագրվեց եւ հանձնվեց ԳԽ

Սեպտեմբերի 9-ին, Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչության կենտրոնական գրասենյակում, Քաղաքացիական համաձայնության Սահմանադրական խորհրդի անդամ վեց կուսակցությունների՝ Հայաստանի Ազգային ժողովրդական կուսակցության, Հայաստանի Դեմոկրատական կուսակցության, Հայաստանի Հանրապետական կուսակցության, Հայ Հեղափոխական դաշնակցության, Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության եւ Սահմանադրական իրավունք միության ղեկավարությունների ղեկավարները՝ ՀԱԺԿ-ի առաջին փոխնախագահ Մելս Մկրտչյանը, ՀԴԿ-ի նախագահ Արամ Սարգսյանը, ՀՀԿ-ի նախագահ Ա. Ոսկանյանը, ՀՅԴ-ի Հայաստանի ԿԿ-ի ներկայացուցիչ Լեւոն Մկրտչյանը, ՈԱԿ ՀԿ-ի ատենապետ Ռուբեն Միրզախանյանը եւ ՍԻՄ-ի նախագահ Հրանտ Խաչատրյանը իրենց ստորագրությունները դրեցին Սահմանադրական խորհրդի կողմից ստեղծված ՀՀ Սահմանադրության նախագծի տակ: Այնուհետեւ, ՀՀ-ի հիմնական օրենքի միացյալ տարբերակը օրենսդրական նախաձեռնության իրավունքով հանձնվեց ՀՀ ԳԽ-ի նախագահությանը: Երեկ, սեպտեմբերի 9-ին, ՀՀ ԳԽ-ի նախագահությունում, վեց կուսակցությունների՝ ՀԱԺԿ-ի, ՀԴԿ-ի, ՀՀԿ-ի, ՀՅԴ-ի, ՈԱԿ-ի եւ ՍԻՄ-ի կողմից ներկայացված Սահմանադրության նախագիծը գրանցվեց որպես օրենսդրական նախաձեռնություն:

Երեւան

Ղասեմի-Վահան Փափազյան զրույց

Սեպտեմբերի 9-ին ՀՀ արտգործնախարար Վահան Փափազյանն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարարի ներկայացուցիչ Բահրամ Ղասեմիին: Վերջինս նրան հանձնեց Իրանի արտգործնախարար Ալի Աքբար Վելայեթիի ուղերձը: Պրն. Ղասեմին նաեւ հայտնեց իրանական հասարակայնության որոշ շրջանակներում առկա անհանգստությունը գոտում ռազմական հզոր ծավալման եւ հայկական ուժերի գործողությունների հետ կապված: Պրն. Փափազյանն իր հերթին նշեց, որ Հայաստանում հասկանում են Իրանի անհանգստությունը: Միեւնույն ժամանակ Իրանի ղեկավարությանը փոխանցվեց նաեւ ԼՂՀ-ի ղեկավարների հավաստիացումը, թե դարաբաղյան զինված ուժերը մտադիր չեն շարունակելու ռազմական գործողություններն Ադրբեջանի տարածքում: Զրույցի վերջում նշվեց, որ հայ-իրանական հարաբերությունները դրված են եղել լավ մակարդակի վրա եւ ամեն ինչ պետք է անել, որպեսզի Դարաբաղի շուրջ հակամարտությունը տեղափոխվի քաղաքական կարգավորման ոլորտ եւ չազդի երկու երկրների փոխհարաբերությունների հետագա ընթացքի վրա:

«Ազգ»

Գազը մի քանի օրով կդադարեցվի: Անդրկովկաս մտնող գազամուղի Ռուսաստանի տարածքով անցնող մի հատվածում հերթական մաքրման աշխատանքների կապակցությամբ սեպտեմբերի 9-ից կարճ ժամանակով կդադարեցվի Վրաստանի եւ Հայաստանի գազամատակարարումը: Այդ պատճառով կփոփոխվեն էլեկտրամատակարարման գրաֆիկները: Մաքրման աշխատանքների ավարտի եւ գազի մուտքի վերականգնման մասին կհաղորդվի լրացուցիչ:

«Ազգ»

Երեւան

ԻՍՐԱՅԵԼԸ ՃԱՆԱՉԵՑ ՊԱԿ-ԻՆ

Դարի հակամարտությունը կարգավորվում է

Երեկ գիշեր թերթը տպագրության հանձնելուց անմիջապես առաջ տեղեկացանք, թե Իսրայելի կառավարությունը ճանաչել է տասնամյակների իր ոխերիմ հակառակորդին՝ Պաղեստինի ազատագրական կազմակերպությանը եւ սպասվում է, որ հետագա մի քանի ժամերին ՊԱԿ-ը Թունիսի իր կենտրոնատեղից պաշտոնապես կհայտարարի Իսրայելի պետությունը ճանաչելու մասին:

Որոշումն առնվեց վարչապետ Յիցխակ Ռաբինի գլխավորությամբ կայացած կառավարության (ներքին կաբինետ) նիստում, որի հենց ընթացքում դուրս գալով, արտգործնախարար Շիմոն Պերեսը ներկա հարյուրավոր լրագրողների անհամբեր հարցին պատասխանելով հայտարարեց, թե «պատմական նշանակության կարեւորագույն որոշում է հայտարարվելու շուտով»:

Պատասխանելով լրագրողների հարցմանը, Պերեսը հայտարարեց, թե «անդայման է, որ ՊԱԿ-ը դատապարտի ահաբեկչությունը»: Իսկ ինչ վերաբերում է ՊԱԿ-ի Ուխից Իսրայելի պետությունը կործանելու մասին հոդվածին, նա հույս հայտնեց, թե այդ բանն արված կլինի արդեն:

Դրանից անմիջապես առաջ, լրագրողների մի ուրիշ մեծ բանակ խոնվել էր Թունիսում ՊԱԿ-ի գլխավոր կենտրոնատեղիի առաջ, որտեղ պաղեստինյան ղեկավարությունը արտահերթ նիստ էր գումարում, շարունակ խորհրդակցելով կողքի դահլիճում գտնվող շատերի համար անակնկալորեն Թունիս ժամանած Նորվեգիայի արտգործնախարար Յոհան Յոգեն Հոսի հետ, որ միջնորդի դերն էր ստանձնել Երուսաղեմի եւ ՊԱԿ-ի միջեւ: Վերջինս մի պահ խոսելով լրագրողների հետ հայտարարեց, թե ՊԱԿ-ն իր հռչակագրից «հաղավել է» արդեն Իսրայելը կործանելու մասին հիմնադրույթը: Իր հերթին, լրագրողների առաջ հանդես գալով ՊԱԿ-ի մամուլի քարտուղար Յասիր Արաֆատ-Ռաբբոյը հայտարարեց, թե իր ներկայացրած կազմակերպությունն իրոք դատապարտում է ահաբեկչությունը եւ բռնության մյուս ձեւերը, ավելացնելով, որ ՊԱԿ-Իսրայել փոխադարձ ճանաչման հարցը կվճռվի առաջիկա մի քանի ժամերի ընթացքում, իսկ Գազայի եւ Երիքոյի պաղեստինցիներին ինքնավարություն շնորհելու պայմանագիրն արդեն վերջնականապես համաձայնեցված է կողմերի միջեւ:

Երուսաղեմում պատմական որոշման հայտարարությունից անմիջապես առաջ «խաղի» մեջ մտավ ամերիկյան վարչությունը. Վաշինգտոնից հայտարարելով, թե նախագահ Քլինթոնը կողմերից պահանջել է ԱՄՆ-ի ներգրավումը համաձայնագրերի վերջնական տարբերակի ստեղծման աշխատանքներին...

Պետք է ասել, որ դատելով եւ պաղեստինյան, եւ իսրայելական ճամբարներում տիրող հակընդդեմ հուժկու շարժումների առկայությունից ու համաձայնության նկատմամբ գոյություն ունեցող ընդդիմություններից, դժվար էր հավատալ, որ այսման շուտ վրա կհասնի կողմերի փոխադարձ ճանաչումը: Մանավանդ որ, նախորդ օրը Ռաբինի կառավարությունը կոռուցիոն ամբաստանություններ հետեւանքով կորցրել էր իր անդամներից երկուսին, որոնցից ներքին գործերի նախարար Արիե Դերին պահանջում էր Շաս փոքրամասնական կուսակցությանը, որի վեց անդամները Կնեսետում կարող էին խախտել վարչապետի ձեռք բերած հավասարակշռությունը եւ վտանգել ՊԱԿ-ի հետ խաղաղության հնարավորությունները:

Այնուհանդերձ, երեկվա ընթացքում կարեւոր տեղաշարժ կատարվեց նաեւ Իսրայել-Հորդանան բանակցություններում Վաշինգտոնում: Կողմերի ներկայացուցիչները հայտարարեցին, թե համաձայնության են եկել խաղաղության պայմանագրի հիմնադրույթների շուրջ եւ հասել գործնական պայմանավորվածության, թե ինչ խնդիրներ պետք է քննարկվեն իրենց միջեւ բանակցությունների ընթացքում: Այժմ պարզ է, որ նրանք պետք է քննարկեն հողի, ջրի եւ զաղթականների հետ կապված խնդիրները:

Երեկ կարեւոր տեղաշարժ կատարվեց նաեւ Իսրայել-Լիբանան սահմանագծի վրա: Անցյալ փետրվարից ի վեր Լիբանան ներխուժած շուրջ 400 պաղեստինցիների կեսը հետիոտն վերադարձ կատարելով դեպի Իսրայել, հանձնվեց իսրայելական իշխանություններին: Իսրայելի ոստիկանության բանբերներից մեկի համաձայն, նրանցից շատերը մի քանի օր պահվելուց հետո կուղարկվեն իրենց տները:

«Ազգ»

Մոսկվա

Թանսու Չիլլեր. «ՀԱՅԵՐԻ 1915 Թ. ԵՂԵՌՆԸ ՉԻ ԿԱՐԵԼԻ ՃԱՆԱՉԵԼ»

Երեկ Մոսկվա կատարած իր այցի արդյունքներին նվիրված մամուլի ասուլիսում Թուրքիայի վարչապետ տիկ. Թանսու Չիլլերը պատասխանելով չեխ լրագրողի հարցին, թե Թուրքիան ինչպիսի՞ դիրքորոշում ունի Ղարաբաղի նկատմամբ եւ հնարավո՞ր է, արդյոք, Թուրքիայի կողմից 1915 թ. հայերի եղեռնի ճանաչումը, ասաց, թե եղեռնը չի կարելի ճանաչել, քանի որ այն տարիներին Անատոլիայում տեղի ունեցած իրադարձությունները չի կարելի հակադրել եղեռնին:

«Դուք ինքդամենը եղել եք այնտեղ ապրող իրար դեմ ելած մարդկանց գործողություններ, ասաց նա, միեւնույն ժամանակ մարդիկ զոհվում են նաեւ Ղարաբաղում: Միջազգային հանրությունը պետք է կանգնեցնի այդ ընթացքը»: Տիկ. Չիլլերը շարունակեց, թե Թուրքիան բարիդրացիական հարաբերություններ ունի բոլոր հարեւան երկրների հետ, օգնություն եւ աջակցություն է ցույց տալիս զարգացող հանրապետություններին, այդ թվում նաեւ Հայաստանին: Սակայն նրա ասելով, Թուրքիան իր արտաքին քաղաքականության մեջ հարգալից վերաբերմունք ունի միջազգային իրավունքի նկատմամբ եւ հանդես է գալիս ահաբեկչության դեմ: Այստեղ, օրինակ, Թուրքիան դատապարտել է ներխուժումը Քուվեյթ, բաժանում է միջազգային հանրության մոտեցումները Բոսնիայի եւ Հերցեգովինայի հարցում եւ այդ տեսակետից էլ Թուրքիան դատապարտում է հայկական կողմի ագրեսիվ գործողությունները Ադրբեջանի նկատմամբ: Ըստ Նոյյան Տապան գործակալության, Թանսու Չիլլերը ասուլիսում հայտարարել է, թե պետք է հաշվի առնել, որ Ղարաբաղն իրեն համարում է ինքնուրույն եւ Հայաստանից անկախ, բայց միեւնույն ժամանակ Հայաստանն էլ իրեն չի միացնում Ղարաբաղին: Սակայն վարչապետի ասելով, տեղի է ունենում ադրբեջանական տարածքների զավթում, եւ նրա կարծիքով, պետք է դադարեցնել Հայաստանի եւ Ղարաբաղի ագրեսիվ գործողությունները: Չիլլերը նույն օրը մեկնեց Անկարա:

«Ազգ»

Վարաբաղ

Մոսկվան զսպում է կողմերին

Արդեն մի քանի օր է, ինչ Ղարաբաղի ռազմաճակատներում իրադրությունը հանգիստ է: Հակամարտ կողմերը ձեռնպահ են մնում ռազմական լայնածավալ գործողություններից: Այս մասին Ստեփանակերտից հաղորդում է մեր թղթակից Վահրամ Աղաջանյանը: Երբեմն-երբեմն հրադադարը խախտվում է կարճատեւ գնդակոծություններով եւ հրետակոծություններով: Ըստ երեւույթին, ադրբեջանական որոշ կազմավորումներ կամ իսկապես դուրս են վերահսկողությունից, կամ փորձում են պահպանել լարվածությունը: Ստեփանակերտի ռազմական դիտորդներն այն կարծիքին են, թե կողմերը չեն ցանկանում ռազմական գործողություններ ծավալել այս օրերին, երբ Մոսկվայում հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ բանակցություններ են ընթանում:

«Ազգ»

Եթե Ռուսաստանը չօգնի Ադրբեջանին կասեցնելու հայերի հարձակումը, ապա Ալիեւը կարող է դիմել իր էթնիկական դաշնակիցներին, Թուրքիային եւ Իրանին, օգնության խնդրանքով, հայտարարել է «Ասոշիեյթդ պրես» գործակալությունը: Հավանաբար Հեյդար Ալիեւի այդ դիրքորոշումը իր առաջին պտուղներն է տալիս: «ԻՌՆԱ» իրանական գործակալության հաղորդագրության համաձայն, Իրանի եւ Հայաստանի արտգործնախարարների սեպտեմբերի 7-ի հեռախոսազրույցում հայ նախարարը հայտնել է, որ «Ղարաբաղի հայերը շուտով կթողնեն գրաված տարածքները»:

Սնարֆ

Բիզնես

Քլինթոնը մերժում է օդային հարվածները

Նախագահ Քլինթոնը մերժել է Բոսնիայի մուսուլմանների ղեկավարի խնդրանքն ամերիկյան օդուժի հարվածների համար ժամկետ նշանակելու, եթե սերբերը ետ չխաբեն Սարաեւոյի շուրջը տեղակայված հրետանին: Բայց Քլինթոնը երաշխավորվել է անհրաժեշտության դեպքում ՆԱՏՕ-ի ուժերի կազմում ԱՄՆ-ի զորքեր ուղարկել, եթե կոնգրեսը հավանություն տա նման քայլին, եւ եթե հակամարտ կողմերը համաձայնության գան խաղաղության ալեաի շուրջ: Մինչդեռ Սարաեւոյի մերձակա լանջերին թյուրիմացության պատճառով կռիվ է բռնկվել սերբական եւ մուսուլմանական զորքերի միջեւ: Կրակոցները դադարեցին, եւ սերբական զորքերը ետ նահանջվել, երբ ՄԱԿ-ի պաշտոնյաները հայտնել են, որ մուսուլմանների զորքերն ուղղակի հերթափոխվում են: Երեկ վերսկսվել են խորվաթական եւ սերբական ուժերի կողմից Մոստարի օդբակոծումները: Զոհվել են 9 եւ վիրավորվել 40 մարդ: Իսկ խորվաթական կուսակցությունը 1991 թվականին զոհված խորվաթ ոստիկանների հուշաքարին այցելության ժամանակ մի ական է պայթել: Զոհվել է խորվաթական բանակի բրիգադի հրամանատարը, վիրավորվել են 2 հեռուստալրագրող եւ 1 խաղաղապահ ուժերի զինվոր: Այժմ տեղանքը վերահսկվում է ՄԱԿ-ի զորքերի կողմից:

Կանխահաս ընտրություններ Հունաստանում

Կոնստանդին Միցոտակիսի կառավարությունը երեկ հրաժարական տվեց: Վարչապետն անձամբ ներկայացրեց իր կաբինետի հրաժարականը նախագահ Կարամանլիսին, որ կանխահաս ընտրություններ հայտարարեց երկրում: Կառավարության անակնկալ հրաժարականի պատճառ հանդիսացավ պահպանողական ժողովրդավարական կուսակցության ներսում առաջացած երկփեղկումը, երբ նույն կուսակցության մի խումբ պատգամավորներ կազմեցին «Նոր ժողովրդավարություն» խումբը, 300 հոգանոց խորհրդարանում ստեղծելով հավասարակշռություն իշխող կուսակցության եւ սոցիալիստների միջեւ, որի պայմաններում Միցոտակիսը չէր կարող աշխատել: Հունաստանում վերջերս կայացած հարցախույզի արդյունքներով, առաջի կա ընտրություններում հաղթելու ավելի մեծ հավանականություն ունի Սոցիալիստական կուսակցությունը, որի ղեկը՝ նախկին վարչապետ Անդրեաս Պապանդրեուն, որն այժմ 74 տարեկան է, ընտրություններում պարտություն էր կրել Միցոտակիսից:

Սպանություններ Յոհաննեսբուրգում

Ըստ ոստիկանության տվյալների, Յոհաննեսբուրգի արվարձաններում հասարակական տրանսպորտի վրա կազմակերպված երեք հարձակումների ժամանակ զինյալները սպանել են առնվազն 25 սեւամորքների: 10 սեւամորք հարձակվողներն անկանոն կրակահերթեր են բացել ուղեւորների վրա: Այս հարձակումները հետեւել են երեքշաբթի օրը ստորագրված շրջադարձային համաձայնությանը, որը վերջ էր տալիս սպիտակ փոքրամասնության իշխանությանը: ■

digitised by A.R.A.R.@

Ընդդիմություն

ՎԵՑՅԱԿԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հուլիսի 16-ին հինգ կուսակցությունների՝ ՀԴԿ, ՀՀԿ, ՀՅԴ, ՀՈԱԿ եւ ՍԻՄ կողմից կազմված (հետագայում նրանց միացավ ՀԱԺԿ-ն) խաղաղասիրական հանձնաժողովի Սահմանադրական խորհուրդը, որի ի հայտ գալը պայմանավորված էր ՀՀ նախագահի գլխավորությամբ Սահմանադրական հանձնաժողովի կողմից առաջարկված ՀՀ հիմնական օրենքի նախագծի ժողովրդավարության եւ իրավական-քաղաքական հասարակարգի ստեղծման նորմերի հետ անհամատեղելիությամբ, ինչպես նաեւ ամբողջատիրական վարչակարգի վերադառնալու իրական վտանգի առկայությամբ, սեպտեմբերի 9-ին հայտարարեց իր աշխատանքների կարեւոր փուլի՝ Հայաստանի սահմանադրության միացյալ տարբերակի ստեղծման ավարտի մասին: Այսպիսով, հակառակ բազմաթիվ հոռետեսական կանխատեսումների, գաղափարախոսական տարբեր հավատամքներ ունեցող հասարակական-քաղաքական կազմակերպություններն ազգային եւ ժողովրդավարության արժեքների պաշտպանության դիրքերում կանգնելով, կարողացան համախմբվել եւ ժողովրդին ներկայացնել ՀՀ հիմնական օրենքի այլընտրանքային նախագծով: Կատարված աշխատանքը գնահատելու խնդրանքով դիմեցինք վերոհիշյալ կուսակցությունների պատվիրակությունների ղեկավարներին:

ՄԵԼՍ ՄԿՐՏՉՅԱՆ, *Ազգային ժողովրդավարական կուսակցության առաջին փոխնախագահ:* Ինչպես հայտնի է, մեր կուսակցությունը անմիջապես չմիացավ քաղաքացիական համաձայնության սահմանադրական խորհրդի նախաձեռնությանը: Դա պայմանավորված էր նրանով, որ մենք եւս աշխատում էինք ՀՀ հիմնական օրենքի սեփական տարբերակի վրա: Սակայն հետագայում ԱԺԿ-ի ղեկավարությունը գտավ, որ անիմաստ է առանձին-առանձին հանդես գալը: Մի բան, ինչն իր հերթին ջլատում է ազգի մտավոր կարողությունը: Ահա թե ինչու որոշում ընդունվեց միանալ ՍԽ-ին: Եւ կարծում ենք, որ կարողացանք մեր ներդրումն ունենալ Սահմանադրության միացյալ տարբերակի վերջնական ձեւավորման գործում:

Ինչ խոսք, հասկանալի է նաեւ, որ սրանով չի ավարտվում մեր գործունեությունը՝ այլ բան է մնալ նախագիծը, մեկ այլ բան՝ ժողովրդին նրա հիմնական դրույթների իմաստի մատուցումը: Այնպես որ, հիմնական եւ ավելի ծանր աշխատանքը դեռ առջեւում է:

ԱՇՈՏ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ: *Հանրապետական կուսակցության նախագահ:* Ճիշտ է, մենք մի շատ կարեւոր փուլ ավարտեցինք, բայց դրանով մեր մտահոգությունները չեն ավարտվում: Դեռեւս մեծ դժվարություններ են լինելու, ինչպես ՀՀ ԳԽ-ում միացյալ տարբերակի պաշտպանության, այնպես էլ հասարակության լայն խավերին այն ներկայացնելու ժամանակ: Այսօր արդեն ակնհայտ է, որ տարբեր կոլեկտիվներում սահմանադրությունների ոչ թե իրական, այլ վարչահրամայական ավանդույթների ոգով կազմակերպվող քննարկումներ են տեղի ունենում: Արդյունքում «դրական» վերաբերմունքի է արժանանում միայն ՀՀ նախագահի գլխավորությամբ ստեղծված սահմանադրության նախագիծը:

Ահա թե ինչու այսուհետեւ մենք շատ աշխատանք պետք է տանենք, որպեսզի ժողովուրդը պարզորեն տեսնի Սահմանադրության հրապարակի վրա եղած տարբերակների հիմնական տարբերությունները եւ դրանց ստեղծողների մտավախությունները ու զսումները, ինչպես նաեւ այն հանգամանքները, որոնք մեզ ստիպեցին համախմբվել մեկ, միասնական նախագծի շուրջ: Հայաստանի բնակչությունը ճիշտ ընտրություն կատարելու համար նախ-եւառաջ պետք է լավատեղյակ լինի:

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ, *Դեմոկրատական կուսակցության նախագահ:* Այս պահին միայն ուրախություն եմ արտում, որովհետեւ սա մեր պատմության այն եզակի դեպքերից մեկն է, երբ վեց քաղաքական կազմակերպություններ համախմբվելով, կարողացան իրական, ազգանպաստ արդյունքի հասնել:

Խնդիրը մեկ այլ կողմ էլ ունի, քանզի այսօրվա իշխանություններին մենք օրինակ ցույց տվեցինք, թե ինչպես կարելի է ազգը տանել միասնականության եւ ոչ պառակտման ուղիով: Ցանկանում եմ ընդգծել նաեւ, որ այն սադրիչ ելույթներին, թե ընդդիմություն չկա, բավականին գործնական պատասխան տրվեց: Ընդդիմությունն իր գոյությունը զգնք ու գրահով չէ, որ պետք է ապացուցի, այլ իր կառուցողական քայլերով: Սա, մեր կարծիքով, կուսակցությունների միասնական աշխատանքի ամենից գլխավոր հետեւությունն է:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ, *Հայ հեղափոխական դաշնակցության Հայաստանի կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ:* Այս պահին մեր տրամադրությունը կարելի է ասել, տագնապալի է, որովհետեւ իր ավարտին հասցվեց ՀՀ Սահմանադրության միասնական տարբերակի ստեղծման բավականին դժվարին ու բարդ աշխատանքը: Իսկ գլխավորն այն է, որ մենք մեծ սպասելիքներ ունենք, քանզի լարված ու ծանր գործունեության արդյունքն առկա է: Իհարկե, տարբեր հարցերի շուրջ տարաձայնություններ եւս եղան, սակայն ՍԽ-ի անդամ բոլոր կուսակցություններն էլ խնդրին վերաբերվում էին մեծ պատասխանատվությամբ: Եւ դա թույլ տվեց մշակել Սահմանադրության իրոք միասնական ու փոխհամաձայնեցված տարբերակ, որն իր էությամբ եւ շեշտադրումներով ազգային հողի վրա է կանգնած: Իսկ դա, ի վերջո, ամենից կարեւորն է:

ՀՐԱՆՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ, *Սահմանադրական իրավունք միության նախագահ:* Ցանկացած գործ, որ հաջողությամբ իր հանգրվանային ավարտին է հասցվում, անպայման դրական հույզեր է առաջացնում: Հատկանշական է, որ ՍԽ-ի կողմից արդեն հաստատված սահմանադրության նախագծի վրա աշխատելիս եւ ավանդական, եւ նորաստեղծ կուսակցությունները միմյանց փոխադարձ հարգանքով էին վերաբերում:

Դա հույս է ներշնչում, որ հետագայում, երբ ձեւավորվի Սահմանադիր ժողովը, որտեղ կուսակցությունները կձգտեն ավելի կատարելագործել իրենց դատին ներկայացված հիմնական օրենքի նախագծերը, նույն ոգին կտիրի նաեւ այնտեղ: Ըստ էության, մենք այսօր ունենք ոչ միայն Սահմանադրության միասնական տարբերակ, այլեւ համատեղ արդյունավետ աշխատանքի միասնական ոճ: Ամենաէականը մենք սա ենք համարում: Եւ եթե փոխհամաձայնության այս ոգին հաղորդվի առաջիկայում ձեւավորվող իշխանություններին, առա դատության այս փուլում հայ ժողովուրդը անպայման հաջողությունների կհասնի:

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ, *Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչության ատենադպիր:* Մենք ծայրաստիճան բարձր ենք գնահատում կատարված աշխատանքը, քանզի այն ակնհայտ դարձրեց ընդդիմության միասնաբար գործելու ընդունակությունը: Փաստորեն շատ կարճ ժամանակահատվածում՝ մոտ մեկուկես ամսում գումարելով տասնհինգ նիստ, հնարավորություն ունեցանք ստանալու Սահմանադրության մեկ միասնական նախագիծ: Սա, առանց չափազանցության, բացառիկ երեւույթ է, ունենալով միանգամայն տարբեր գաղափարախոսություններ եւ աշխարհայացքներ, ինչպես նաեւ բեւեռային հակառակ քաղաքական վարքագծեր, վեց կուսակցություններ հանդես բերեցին հասունության բարձր աստիճան եւ զգալի հաջողության հասան: Մի բան, որը խոստմնալից հեռանկարներ է բացում հանրապետության ներքաղաքական կյանքում:

Անշուշտ, մենք այն կարծիքին չենք, որ միասնական տարբերակն անթերի է: Այդ պատճառով էլ հիմնական աշխատանքն սկսվում է այսօրվանից, երբ արդեն պատրաստ է նախագիծը: Ցանկալի կլինի, որ ստեղծված փաստաթուղթն իրոք համաժողովրդական եւ ոչ թե գործադիր բարձրագույն իշխանության կողմից պարտադրված, ընդարկման ենթարկվի, որ հնարավորին չափով շատ լինեն դիտողությունները:

Անհրաժեշտ եմ համարում նաեւ նշել, որ միացյալ նախագիծը վերջինն է այն բոլոր տարբերակներից, որոնք արդեն հրապարակվել են եւ նրանում հաշվի են առնված արտահայտված շատ կարծիքներ:

Եւ դա ամենեւին էլ ինքնանպատակ չէ: Չէ որ մեր նպատակը ավելի քան հստակ է. ունենալ հասարակության կառավարության դեկավարման այնպիսի մեխանիզմներով հագեցած Սահմանադրություն, որը երաշխավորի Հայաստանի ժողովրդավարականացման եւ բնակչության բարգավաճման կայուն ընթացքը:

Պատրաստեց
ՀՈՎՍԵՓ ՊՈՂՈՍՅԱՆԸ

Մուր Լեկցիա

Բրեժնեւի զինակցի «Բրեժնեւյան սինդրոմը»

Հեյդար Ալիեւի մոսկովյան այցը նրա առաջին ուղեւորությունն էր արտասահման, Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար դառնալուց հետո: Թե որքանով նրան հաջողվեց «ուղղել իր նախորդների սխալը», ցույց կտա մոտ ապագան: Սակայն, համենայն դեպս, այժմ արդեն կարելի է արձանագրել, «Ադրբեջանը լայնորեն քայլում է դեպի ... ԱՊՀ»: Մոսկովյան ուղեւորության վերջնադրակը Հեյդար Ալիեւի մամուլի ասուլիսն էր, որը տեւեց երկու ժամ եւ որը Միլլի մեջլիսի յոթանասունամյա նախագահն անցկացրեց հոտնկայս ապրույգության եւ դիմացկունության դրսեւորում ցույց տալու համար, թե դեռ չի պարզվել «քաղաքական երկրորդ շնչառությունն» ապրող «հին ոսկորը»: Ծերունական սինդրո՞մ: Այդ գուցե: Բայց այն է, որ «հին ոսկորը» (գոնե քաղաքական առումով) չի պարզվել, թերեւս անկասկած է: Բրեժնեւյան «զինախմբի» կարկառուն ներկայացուցիչը «կոմերիտական» ավյունով ծեռնամուխ է եղել նաեւ Ադրբեջանի ներքաղաքական «բարեփոխումներին» ընդառաջ գնալով հոկտեմբերի 3-ին նշանակված նախագահական ընտրություններին: Եւ կասկած չի հարուցում, որ երկու շաբաթ հետո Ադրբեջանում ընտրողները նախագահական ընտրություններին քվեարկելու են կամ Հեյդար Ալիեւի կամ էլ... նորից Հեյդար Ալիեւի օգտին, «ամբողջովին ու լիովին» պաշտպանելով նրա քաղաքական ուղեգիծը: «Բրեժնեւյան սինդրոմ» ապրող Ադրբեջանը «ժողովրդավարության ոճենասնսի» փայլուն օրինակ է այսօր եւ հետաքրքիր է, թե ո՞ւմ համակրանքին կարժանանա:

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Քարոզ

Ադրբեջանցի տղային տուն ուղարկեցին

14 ամյա ադրբեջանցի Անար Կուրբանովին, որը պատահաբար հայտնվել էր Հայաստանում, սեպտեմբերի 8-ին ազգային անվտանգության աշխատակիցները հանձնեցին Միջազգային Կարմիր խաչի հայկական բաժանմունքի ներկայացուցիչներին: Ադրբեջանցի պատանին խառնել էր գնացքները, եւ Թբիլիսից մեկնելով, սեպտեմբերի 7-ին հայտնվել էր Այրում կայարանում: Շորեքշաբթի օրը նա ինքնաթիռով հասցվեց Թբիլիսի, այնուհետեւ՝ Գյանջա, որտեղ ապրում են նրա ծնողները: ԻՏ

Դեբորա Ուելշը ճանաչում է Ադրբեջանի կանանց կազմակերպություններին

ԱՄՆ-ի խաղաղության ազգային հիմնադրամի ներկայացուցիչ, կանանց շարժման ղեկավար Դեբորա Ուելշը Բաքու է ժամանել, որպեսզի սեռ կարեր հասատի հանրապետության կանանց կազմակերպությունների հետ եւ Անդրկովկասի կանանց հանդիպում կազմակերպի Ադրբեջանի ու Հայաստանի հակամարտության խաղաղ կարգավորմանը նպաստելու համար: Այս մասին սեպտեմբերի 8-ին հաղորդեց Նոյյան տապան գործակալությունը: «Ամերիկացի կանայք չեն կարող դադարեցնել պատերազմը, բայց մենք կձգտենք դրական քայլեր անել տեղաշրջանում կրակի եւ արյունահեղության դադարեցումը մոտեցնելու համար», հայտարարեց Դեբորա Ուելշը Պոստ Ֆակտում գործակալությանը: «Ազերբայջան գաղինլարի» կանանց հանրապետական ընկերությունում ամերիկացի հյուրին պատմեցին այդ կազմակերպության աշխատանքի մասին: Նա նաեւ հանդիպում ունեցավ Ադրբեջանի գրավյալ շրջաններից եկած փախստական կանանց հետ, ծանրաբեռնված կանանց եւ երեխաների սոցիալական խնդիրներին: ՆՏ

Կրթություն

Ուսանողներն առանց հացի

Ի հավաստումն վաղուց ի վեր հայտնի այն արտահայտության, թե «ոչ միայն հացիվ, այլ նաեւ բանիվ», միայն «բանիվ» սնվելուց կշտացած ուսանողները սեպտեմբերի 9-ին հավաքվել էին համալսարանի շենքի առջեւ, պահանջելու իրենց բաժին հացը. 250 գրամ կորած, այսինքն, ավելի ճիշտ վերին որոշ օղակներում մոռացված օրաբաժինը: Համալսարանի շատ ուսանողներ, որոնք չեն բնակվում հանրակացարանում եւ միեւնույն ժամանակ չունեն երեւանի գրանցում, արդեն 9 օր է հաց չեն ստանում ոչ մի տեղից եւ ստիպված ուսման խնդրի հացային կողմն առպահովելու համար հաց են գնում «ձեռի վրից», դրանով իսկ սեփական փորձով ակամա համոզվելով շուկայական հարաբերությունների «արդյունավետության» մեջ: Իսկ վերին օղակները, որոնք պարտավոր են այդ հարցը լուծել, ըստ երեւույթին, այլ ծեւ չգիտեն շուկայական հարաբերությունների ուսուցման: Եւ եթե նրանք կարծում են, թե տնտեսագիտության հիմունքներին ծանոթացնելու այլ ծեւ չկա, քան հացից զրկելը, ավելի լավ կլիներ այդ բնագավառին միայն տեսականորեն ծանոթ որոշ պաշտոնյաների բաժին հացը ուսանողներին հասանելիք հացի հետ, ինչպես անցյալ տարի, վաճառեին ուսանողներին համալսարանի ճաշարանից կամ համենայն դեպս, լուծվեր այդ խնդիրը: Իսկ հացից զրկված պաշտոնյաներին հնարավորություն տային չափչփել զանազան նախարարությունների դռները, ինչպես հացից զրկված ուսանողները, լուծելու չգիտես ինչու անլուծելի դարձած հացի խնդիրը:

Իսկ առայժմ սեպտեմբերի 1-9-ն ընկած ժամանակահատվածում կորած ուսանողական հացաբաժինները զրկված են իրենց օրինական տերերից եւ անհայտ է, թե ում փորն են կշտացնում: Իսկ ուսանողից պահանջում են սովորել: Այսպիսի վերաբերմունքից հետո ստիպված մտածում ես, թե ըստ ոմանց «սովորել» բառի արմատը եւ հիմնական իմաստը «սովն է»: Այսինքն, սովորել սոված: Դի եկ, ուսանող, սովորիր ու հավատա վերեւներին, որ այնքան վերեւում են, որ ներքեւը չեն տեսնում:

Գ. Ն.

Սեպտեմբերի 9-ից Բրյուսելում գործող Հայաստանի դեսպանատունը սկսեց նաեւ մուտքի հրավերների ձեւակերպումը: Այդ մասին հայտնեցին ՀՀ ԱԳՆ մամուլի եւ հասարակայնության հետ կապերի ծառայությունից: Հիշեցնենք, որ օգոստոսի 1-ին Բրյուսելում բացված ՀՀ դեսպանատունը կատարում է նաեւ Հոլանդիայում, Լյուքսեմբուրգում, ՆԱՏՕ-ում եւ Եվրոպական ընկերակցությունում Հայաստանի դեսպանության դերը: «Ազգ»

Աշխարհ

Թուրքիան պատրաստ է ռազմական օգնություն ցույց տալ Ադրբեջանին

Թուրքիայի խորհրդարանական պատվիրակության ղեկավար, հանրապետության ազգային մեծ ժողովում «Մայր հայրենիք» ֆրակցիայի ղեկավար Էյուբ Ասիզը սեպտեմբերի 7-ին Բաքվում կայացած մամուլի ասուլիսում հայտարարեց, որ «Թուրքիայի կառավարությունը պատրաստ է Ադրբեջանին ռազմական օգնություն ցույց տալ այդ շրջանում հայկական զինված ուժերի հետագա հարձակողական գործողությունների դեպքում», շորեքշաբթի օրը հաղորդեց Նոյյան տապան գործակալությունը: Էյուբ Ասիզը լրագրողներին հայտարարեց, որ Ադրբեջանի ղեկավարությանը հայտնի է Թուրքիայի մտադրությունը քաղաքական ու տնտեսական օգնությունից բացի Ադրբեջանին ցույց տալու նաեւ ռազմական օգնություն:

Էյուբ Ասիզը նաեւ նշեց, որ երբ Հայաստանը մարտական գործողություններ սկսի Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունում, արդա ըստ 1921 թ. Թուրքիայի եւ Ռուսաստանի ստորագրած Կարսի համաձայնագրի, Թուրքիան իրավունք ունի սկսելու ռազմական գործողություններ եւ պատասխանելու իր տարածքների անվտանգությունը: Ընդսմին, ավելացրեց թուրք խորհրդարանականը, նման ռազմական համաձայնագրեր կարող են կնքվել նաեւ Ադրբեջանի ամբողջ տարածքի առնչությամբ:

Պոստֆակտում. «Մայր հայրենիք» կուսակցությունը, որի խորհրդարանական ներկայացուցիչն է Էյուբ Ասիզը, ներկայումս ընդդիմադիր է Թուրքիայի պատասխանատու իշխանություններին: Իր ազգայնական հայացքներով «Մայր հայրենիքը» հայ-ադրբեջանական հակասությունների սրման հենց-սկզբից հանդես էր գալիս տվյալ հակամարտության լուծմանը Թուրքիայի ակտիվ մասնակցության օգտին, ընդհուպ մինչեւ Ադրբեջանին ռազմական աջակցություն ցույց տալը: ՆՏ

Ֆրանսիայի Ազգային տոնի Բաստիլիի գրավման տարեդարձի առթիվ Հայաստանի Հանրապետության վարչապետ Հրանտ Բագրատյանը շնորհավորական հեռագիր էր հղել Ֆրանսիայի վարչապետ Էդուար Բալադյուրին: Պատասխան նամակում Ֆրանսիայի վարչապետը, շնորհակալություն հայտնելով բարեմաղթանքների համար, մասնավորապես գրում է. «Ձեր ուղերձը ինձ խորապես հուզեց, մանավանդ, նկատի ունենալով Ֆրանսիայի եւ Հայաստանի միջեւ գոյություն ունեցող ավանդական բարեկամական կապերը եւ փոխշահավետ համագործակցությունը»: ՀՀ ԿԱԾ

digitised by A.R.A.R.@

Մոսկվայական

ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ՃԱՆՐ ՁՄԵՌԸ ԵՏԵՎՈՒՄ Է

Առջեւում ծմեռն է, եւ բնականաբար հանրապետության էներգետիկ խնդիրներն օրեցօր ավելի ու ավելի կարեւոր տեղ են զբաղեցնում մեր կյանքում սկսած վառելիքի ու վառարանի հոգսից մինչեւ առաջիկա ձմռան ընթացքում սենյակների հնարավոր ջերմաստիճանի գուցակումն ու համապատասխան միջոցառումների ձեռնարկումը: Եւ այնուամենայնիվ, վերջին շրջանում պաշտոնական հանդիպումներն ու մամուլի հրապարակումները որոշակի հույսեր են ներշնչում, թե գուցե մեր վերապրած մղձավանջային ձմեռն իսկապես վերջինն էր, եւ այս ձմեռ ավելի լավ կլինի: Համենայն դեպս, ի տարբերություն նախորդ տարվա, երբ գազամուղի հերթական պայթյունները հանրապետությունը նետում էին անբախանց խավարի մեջ, եւ վերջը չէր երեւում, այս տարի կարծես թե ուրվագծվում է ինչ թե շատ տանելի ձմռան հեռանկարը:

Ռուսաստանի փոխվարչապետ Լոբովի եւ Հայաստանի վարչապետ Բագրատյանի հանդիպման ժամանակ ձեռք է բերվել պայմանավորվածություն, որի համաձայն Ռուսաստանը Հայաստանին կտա նավթ, գազ եւ մազութ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաեւ հայկական ատոմակայանը հայրենական համատեղ ձեռնարկություն դարձնելու վերաբերյալ: Եթե Ռուսաստանը Հայաստանին իսկապես օրական 8.5 միլիոն խորանարդ մետր գազ տա (իսկ նոյեմբերի մեկից հետո՝ 10.5), նշանակում է, այս ձմեռ լույս եւ ջերմություն կունենանք: Իսկ եթե դրան գումարած մինչեւ ձմեռ վերագործարկվի նաեւ ատոմակայանը (որոշակի ժամկետներ մասնագույց անելուց բոլորը խուսափում են, սակայն խոսակցություններ կան, թե նախաղաստասական աշխատանքները կարող են ավարտվել դեկտեմբերին), ապա Հայաստանն իրեն լիովի կապահովի էլեկտրաէներգիայով եւ նույնիսկ կարող է որոշ քանակություն արտահանել: Ինչ վերաբերում է նավթին, գազին եւ մազութին, ապա Ռուսաստանից ստանալու դեպքում երեւի դրանց տեղ հասցնելու խնդիրները փոքր-ինչ կթեթեւանան՝ հաշվի առնելով շրջանում Ռուսաստանի ազդեցությունն ու մանավանդ Ադրբեջան-Ռուսաստան հարաբերություններում մերձեցման միտումները: Ատոմակայանի՝ հայ-ռուսական համատեղ ձեռնարկության կարգավիճակի ձեռքբերումն իր հերթին կարող է լուծել վերաբացման հետ կապված խնդիրների մի մասը: Մասնավորապես կարող են լուծվել հումքի եւ պահեստային սարքավորումների, մասնագետների, թափոնների, ինչպես նաեւ ատոմակայանի անվտանգության հետ կապված մի շարք խնդիրներ:

Բոլոր դեպքերում, երկու տարի լիակատար շրջափակման մեջ ապրած եւ հիրավի անմարդկային պայմաններում մի կերպ գոյատեւած ժողովրդին այնքան էլ հեշտ չէ համոզել, թե առաջիկայում կարող են բացել իրենց գազածորանները... եւ վայելել այնքան սպասված բույրը: Մարդիկ համոզվել են, որ ավելի հաճախ միջպետական պայմանագրերն ու առեւտրական համաձայնագրերը լույս երաշխիք հանդիսանալ չեն կարող, եւ իշխանությունների՝ դրանց վրա հիմնված լավատեսական խոսքերը որպես կանոն խոսքեր էլ մնում են: Անկեղծ ասած, նման ձմեռվանից հետո լավատես լինելն իսկապես հերոսություն է, մանավանդ որ Հայաստան մտնող հաղորդակցության ուղիներն առաջվա պես ենթակա են շրջափակումների ու պայթեցումների, իսկ քաղաքական փորձիշատ նոպաստավոր իրավիճակը խիստ անկայուն է եւ ցանկացած պահի կարող է փոխվել: Այսպես թե այնպես, անցած տարիները մասնագետներին ստիպեցին լրջորեն մտածել հանրապետության սեփական էներգաղբյուրներով ապահովելու մասին՝ հանրապետության տարածքում ճավթի եւ գազի որոնողական աշխատանքներից մինչեւ արեւային էներգիա, քամու էլեկտրակայաններ եւ այլն: Այս ծրագրերի մեջ ամենաֆանտաստիկը բերեւս հրաբխի վրա էլեկտրակայան կառուցելու գաղափարն է, որի հեղինակը բնական պաշարների էկոլոգիական օգտագործման «Վիտա» միության ինժեներ-նախագահ Վլադիմիր Զենկո-Ֆրիտցն է: Ընդհանուր գծերով ծրագիրը հետեւյալն է՝ օգտագործել Հայաստանի հանքային ջրերը, որոնց էներգիայի քանակը իր կարելի է տարեկան մի քանի միլիարդ դոլար եկամուտ ստանալ (անկեղծ ասած, այս վիթխարի թիվն ինքնին կասկածելի է դարձնում ծրագրի իրատեսությունը), եւ այդ միջոցներով Սիսիանի՝ շրջանի տարածքում գտնվող ստորգետնյա հրաբխի վրա կառուցել էլեկտրակայան, որը հնարավորություն կտա ոչ միայն Հայաստանն ապահովել էլեկտրաէներգիայով, այլեւ հնարավոր կլինի երկրաշարժի վտանգը նվազեցնելով հրաբխի էներգիան: Բացի դրանից, ծրագիրն անիրագործելի է, այնուամենայնիվ ստեղծվել է բաժնետիրական ընկերություն, որն իր բաժնետերերին խոստանում է ոչ ավել, ոչ պակաս, քան էլեկտրաէներգիա տալ (ավելացրած տարեկան 25 տոկոս եկամուտ տարադրամով):

Բոլոր դեպքերում տակավին ընդամենը հեռանկարային ծրագրեր են, եւ նույնիսկ հայկական ատոմակայանի վերագործարկումը, որի նախապատրաստական աշխատանքներն արդեն մեկնարկվել են, հայտնի չէ, թե երբ կիրականացվի: Ամենահուսալի, եւ եթե կուզեք՝ առայժմ միակ աղբյուրը մնում է գազն ու մազութը, եւ դրանից է կախված առաջիկա ձմռանը Հայաստանի կացությունը: Մնացածն աղագայի խնդիր է, իսկ այդ աղագային հասնելու համար անհրաժեշտ է անել ամեն ինչ, որպեսզի անցած ծանր ձմեռն իսկապես վերջինը լինի: Միջպետական հարաբերություններում իշխանություններն առայժմ կարծես թե լույս հաջողություններ ունեն: Սակայն չե՞ն մնա աղյուսներ ստորագրված եւ ստորագրվելիք համաձայնագրերը թղթի վրա: Ինչպես ասում են, կաղրենք կտեսնենք, թեեւ նախորդ ձմեռը վերհիշելիս ադրելու ցանկությունը կտրուկ նվազում է:

ԱՐԱՍ ԱՐՈՒԹՅԱՆ

Ստեփանակերտ

ԼՂՀ առաջին նամականիշները

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում շրջանառության մեջ է դրվել սեփական փոստային էմիսիան: Այսուհետեւ հանրապետությունում առաքումները կրում են ԼՂՀ պետական դրոշի «Մենք ենք, մեր լեռները» հուշարձանի եւ ԼՂՀ Գխ առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի դիմանկարի պատկերով ստանդարտ նամականիշները. «Շրջանառության մեջ է դրված նամականիշների ու փոստային բլոկների առաջին շարքը՝ «Անկախ հանրապետություն» խորագրով, որտեղ ԼՂՀ Գխ լրատվական վերլուծական բաժնի վարիչ, Գխ նամականիշների ու կնիքի հարցերով պատասխանատու Սերգեյ Քալանթարյանը, որը հաջողակ ֆիլատելիստ է եւ հավաքորդ: Շարքի մեջ մտնում են նաեւ Գանձասարի եւ Արցախի տարազների պատկերով բլոկը, ստանդարտների փոքր թերթերը: Ինչպես նաեւ առաջին օրվա ծրարը: Դրանք «Նամականիշ» ֆիրմայի օգնությամբ տպագրել է Նյու Ջերսիի (ԱՄՆ)-ը Ինքերնեշնլ գրաֆիկ ֆոմպանի» ընկերությունը: Շարքի նկարիչն է Հարություն Սամուելյանը: Առաջին նամականիշները գեղարվեստական եւ պատմագիտական արժեքի շնորհիվ մեծ պահանջարկ են վայելում արտասահմանյան հավաքորդների շրջանում:

Ցավոք, ԼՂՀ առաջին նամականիշների շուրջ սկսվեց իրարանցում, եւ ոմանք փորձեցին դրա վրա ձեռքեր տարածել: Ամերիկյան «Լիննս սամդ նյուս» թերթը 1993-ի ապրիլի 19-ին, երբ մեր փոստային նյութերը չէին տպագրվել, հոդված հրապարակեց այն մասին, թե իբր վիրտուալությամբ ղարաբաղյան նամականիշներ են մտել շրջանառության մեջ: Ես հանդես եկա հերքումով, որը մեր իսկական նամականիշների տվյալների հետ նույն թերթը տպագրեց հուլիսի 12-ի համարում:

Հիմա էլ, ըստ հասած լուրերի, շրջում են նախկին ԽՍՀՄ նամականիշները «Արցախ» մակագրությամբ եւ նոր նոմինալներով: Պաշտոնապես հայտարարում եմ, ընդգծեց Քալանթարյանը, որ դրանք բոլորը բացառապես կեղծ են ու հավասար են դրամանենգության: Առայժմ ԼՂՀ նամականիշները վերը նշածս նմուշներն են: Իսկ առաջիկայում հավանաբար կթողարկվի Արցախի շրջանի բնության կենդանական աշխարհին նվիրված շարք»:

ՄԱՆՎԵԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Ստեփանակերտ
Արմենպրեսի հատուկ թղթակից

Փարիզ

Դա մեր ճանաչած հայերի երկիրը չի կարող լինել

Օտարի աչքով ինչպես են դիտվում մեր հարցերը

Գլխավորապես Ֆրանսիայի, եվրոպական մի շարք երկրների առօրյա կյանքի դարձյալ սկսում է մուտք գործել հայկական թեման, ավելի ճիշտ, դարաբաղյան, շնորհիվ վերջինս բանակի հաջողությունների: Շեշտադրումները փոխվել են. հայերը պարզվողներից դարձել են հաղթողներ, թեկուզեւ գերմանա-ֆրանսիական «Արտե» հեռուստակայանը գտնում է, թե «Ղարաբաղի հայերի հոգսը ոչ թե ռազմարշավներն են կամ նվաճումները, այլ նրանք գոյության պայքար են մղում, ուզում են, որ իրենց երեխաները եւ կանայք առանց երկյուղի դպրոց ու տուկա գնան»:

կով օր՝ ցերեկով առանց հանրանիշների մերեդեսները, կադիլակները եւ ԲՄՎ-ները անարգել սլանում են: Եթե «Ջվարթնոց» օդանավակայանում, ուր ամենաոչարզ գործողության համար ժամեր են պահանջվում, ամենալկտի ու ավազակային գործարքներն են կնքվում, մեծ դիտորդ պետք չէ լինել Հայաստանի աղագան գուշակելու համար: Հայաստանը Արեւմուտքի օգնության կարիքը ունի, ճիշտ է, շարունակում է զուցակիցս: Արեւմուտքի համար այստղիսի մի փոքրիկ երկրին օգնելը մեծ բան չէ, սա էլ ճիշտ է: Սակայն եթե Հայաստանը չկարողանա անել այն նվազագույնը, ինչ իրենից է կախված, ապա, անկեղծ եմ ասում, ոչ մի արտասահմանցի այստեղ ոտ չի դնի: Եւ եթե, եզրափակեց պրն. Թիյուլիզը, Հայաստանը չցուցաբերի նվազագույն դրսեւորում, կկդգիանա աշխարհից եւ այդ դեպքում կբաժանվի Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ»:

Իմ հաջորդ զրուցակցին ես հանդիպեցի Փարիզի նշանավոր Հալլ շուկայում իր շուրջը վխտացող բանվորներին կարգադրություններ անելիս:

Պրն. Էդմոնը, որ նախկին ռազմիկ էր եւ պատերազմի ժամանակ հայերի հետ ընկերություն էր արել, որոնց մեջ նաեւ մեր ընթերցողներին ծանոթ պրն. Անդրե Սեֆերյանը, ուզում էր Հայաստան մթերային մեծաքանակ օգնություն կազմակերպել: «Անդրեի հետ մի շաբաթով Հայաստան այցելեցի եւ որոշ ծրագրեր ունեմ, սակայն մինչ այդ կուզենայի մի երկու խոսք ասել: Հավատացեք, ամենահեռին մահմեդական երկրներում կամ Աֆրիկայի բնիկների մեջ շատ ավելի կարգապահություն կա, քան երեւանի օդանավակայանում: Ճանապարհային ոստիկաններն ամեն բոլոր կարող են առանց հարցափորձի դրամ կորզել վարորդներից: Հավատացեք, սա վատ է ազդում այն մարդկանց վրա, ովքեր ուզում են Հայաստանին օգտակար լինել: Իսկ եթե ձեզ չի հետաքրքրում օտարների կարծիքը, դա ուրիշ հարց է»:

Կարծում եմ, մեկնաբանություններ կարիք չկա. Հայաստանի ունեցած հաջողությունները, ձախողությունները, տնտեսական, քաղաքական վիճակը այստեղ են տեսնում արեւմտցիները:

ՐԱՖԻ ՀԵՐՄՈՆ ԱՐԱՔՍ
Մեր սեփ. թղթակից, Փարիզ

Ստեփանակերտի վերականգնումը շարունակվում է: 1992 թվականից մինչեւ այս տարվա հուլիս ամիսը Ստեփանակերտում վերականգնվել եւ շահագործման են հանձնվել հրթիռահրետակոծումներից եւ օդային հարձակումներից տուժած 18 բնակելի շենքեր, ինչպես նաեւ ժողովրդական տնտեսության 8 օբյեկտներ: Այս մասին տեղեկացնում են ԼՂՀ շինարարության պետական կոմիտեից: Նույն աղբյուրների վրա հենվելով՝ Ստեփանակերտի մեր թղթակից Վահրամ Աղաջանյանը հաղորդում է, թե վերականգնման աշխատանքներն իրականացված են տեղացի շինարարների ուժերով:

«Գ.

Բիզնես

Հայ-ամերիկյան նավթահանող ձեռնարկություն

Պետնախարար Սերգուի Թաքջյանը եւ ամերիկյան գործարար, Ամերիկայի Հայկական Համագումարի նախագահ Հրայր Հովնանյանը սեպտեմբերի 3-ին Վաշինգտոնում ստորագրել են պայմանագիր ամերիկա-հայկական համատեղ Արմոյլ նավթ եւ գազարդյունահանող ընկերության ստեղծման մասին:

Ինչպես հայտնեցին Վաշինգտոնում Հայաստանի դեսպանատնից, ձեռնարկությունը, որը կոչվում է Հայկական նավթի եւ գազի զարգացման հիմնադրամ ընկ. կամ Արմոյլ, ստեղծվել է մի խումբ հայ գործարարների կողմից:

Այս ձեռնարկությունը պետք է արդյունահանի նավթ ու գազ տեղական սպառման համար եւ որոշի պաշարները, հետագայում արեւմտյան գործակիցներին ներգրավելու ակնկալիքով: Հայաստանն այժմ նավթ չի արդյունահանում, բայց մասնագետներ հավատում են այնտեղ գազի եւ նավթի նշանակալի պաշարների առկայությանը: Փետրվարին ԱՄՆ Առեւտրի եւ զարգացման գործակալությունը մի հետազոտություն էր հրապարակել, որով Հայաստանին խորհուրդ էր տալիս անմիջապես ձեռնարկել ուսումնասիրություն եւ հորատման մի ծրագիր: Այժմ Արմոյլը կառավարությունից 30 ամսով իրավունք է ձեռք բերել երեւանի մոտ գտնվող 4 հանքավայրերում՝ Հոկտեմբերյանում, Շոռաղբյուրում, Սեւաբերդում եւ Գեղաշենում նավթի հետազոտություններ կատարելու համար:

ԱՄՆ պատասխանատվության նախարարությունը համաձայնել է գործող կոմերցիոն գներից ավելի էժան իրականացնել արդյունահանման համար անհրաժեշտ սարքավորման տեղափոխումը ԱՄՆ-ից եւ Եվրոպայից Հայաստան: Այդ նախագիծը ամենամեծ ձեռնարկումն է, որը ֆինանսավորվում է Հայաստանի եւ ԱՄՆ-ի կառավարությունների, ինչպես նաեւ սպիտակի ներկայացուցիչների կողմից:

Որոշը

«ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ» ՀԱՄԵՐԳԱՍՄԱՆ

4–19 Սեպտեմբերի

Գերմանական երաժշտության օրեր

նախաձեռնողներ՝
Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբ

Գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝

ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ

Գերմանիայի դեսպանատուն Երեւանում

Սեպտեմբերի 11-ի համերգի ծրագրում ընդգրկված են հատվածներ Ռիխարդ Վագների «Տրիստան եւ Իզոլդա» հանճարեղ օպերայից: Յոհան Սեբաստիան Բախի Ջուրակի թիվ 1 կոնցերտի կատարմամբ հանդես կգա ՀՀ պետական մրցանակի դափնեկիր Սուրեն Հախնազարյանը: Համերգի ավարտին կհնչի Ռիխարդ Շտրաուսի «Հերոսի կյանքը» սիմֆոնիկ պոեմը: Ստեղծագործության գլխավոր գործող անձը, նրա «հերոսը» ինքը Ռիխարդ Շտրաուսն է, ինչպես եւ նրա սիրելի կինը, գաղափարական հակառակորդները եւ այլն: Պոեմն այնի է ընկնում սեր, վայելուն հնչողությամբ:

Դիրիժոր **Լորիս Ճգնավորյան**

Փառատոնի հերթական համերգները՝ սեպտեմբերի 12, 15, 18 եւ 19-ին: Շաբաթ եւ կիրակի՝ ժ. 14-ին, չորեքշաբթի՝ ժ. 18-ին:

«Արամ Խաչատրյան» համերգասրահը ապատում է իր ունկնդիրներին:

digitised by A.R.A.R.@

Զորությամբ

Ղարաբաղ. Հույսերի եւ անորոշության ժամանակը

Գորիս-Ստեփանակերտ ճանապարհը գրեթե նույնիսկ ամայի է, որտեղ շրջակա լեռներն ու ձորերը, եւ երբ չլինեն միլ թե շաս արժեքավոր ամենասարբեր իրերով բեռնված ավտոմեքենաները, կարող է այնպիսի տպավորություն ստեղծվել, թե ճանապարհն ընդհանրապես չի գործում: Փախստականների կոմիտեն ավտոբուսներ այլեւս չի ուղարկում (շարային աշխատողներից մեկը պատճառաբանեց, թե փախստականները վերջացել են, քանի որ յուրաքանչյուրը միայն մեկ անգամ կարող է անվճար մեկնել Ստեփանակերտ), եւ օրական մեկ երկու երթուղային ավտոբուսներից բացի Լաչինի միջանցքի անդորրը խախտում են միայն հատուկենտ բեռնատարները: Ղարաբաղի համար սա իսկապես կյանքի ճանապարհ է, եւ Հայաստանի տնտեսական վիճակի մասին ճշգրիտ պատկերացում կարելի է կազմել հենց այս ճանապարհով անցնող բեռնատարների քանակով, իսկ Ղարաբաղի բանակի ռազմական հաջողությունների մասին՝ վերադարձող բեռնատարների պարունակությամբ ու պահակակետերի մոտ նրանց հերթի երկարությամբ:

Թուրքիան եւ ԱՄՆ-ը սաստում են հայերին՝ արդեն առանց ձեւականության, լրջորեն,- հետ քաշել իրենց ուժերը Ղարաբաղին հարող տարածքներից, ցանկանալով ռազմի դաշտում տճանոթով ու բազմաթիվ զոհերով ձեռք բերված հաղթանակները մի հարվածով վերածել զրոյի: Իրանի կազմավորումներն անցան Արաքսը եւ մեկ-երկու կիլոմետր խորվեցին ադրբեջանական տարածքներ իբր թե փախստականների հոսքի դեմն առնելու համար, սակայն պարզ է, որ սա ավելի քան ուժի ցուցադրումը ի տես ադրբեջանական գրավված դիրքերում կանգնած Ղարաբաղի բանակի: Հայ-թուրքական սահմանի վրա կանգնած ռուսական սահմանապահների վրա Թուրքիայի տարածքից կրակոցներ նույնպես անգամ-ության նշաններ չեն, այլ ռուսական հասարակական կարծիքի վրա ազդելու միջոց՝ ստիպել իրենց կառավարությանը դուրս հանել ռուսական կազմավորումները հայկական սահմանից, իսկ մնացածը՝ տեխնիկայի հարց է... Ուստի, արեւմտյան մամուլի այն դեղումները, թե հայկական հաջողությունները մեծապես պայմանավորված են Մոսկվայի նկատելի ներկայությամբ, դարձյալ քարոզչական քայլ է՝ ռուսներին ավելի հեռ պահելու Ղարաբաղի կողքին կանգնելու գայթակղությունից: Ռուսաստանի ամբողջ «օգնությունն» առայժմ սահմանափակվում է չեզոքությամբ, թեեւ տրամաբանությունը հուշում է, թե Ռուսաստանը պետք է թիկունք կանգներ Ղարաբաղին՝ նրա միջոցով Ադրբեջանին ստիպելով հրաժարվել արեւմտյան երազներից եւ հայացքը բեռել դեպի հյուսիս:

Եւ իսկապես, Ռուսաստանը կարող է պարծենալ, թե ի դեմս Լեռնային Ղարաբաղի Անդրկովկասում ունի կայուն հենակետ, որի միջոցով իր բռան մեջ է պահում ինչպես Ադրբեջանը, այնպես էլ Հայաստանը: Սակայն Ղարաբաղի իշխանությունների որոշակի շրջանակներ հասկանում են, որ եթե Ալիեւը սկսում է տեղի տալ Ղարաբաղի միջոցով իրականացվող ռուսաստանյան ճնշումներին եւ հակվել դեպի տնտեսական ու քաղաքական ավելի սերտ համագործակցություն՝ ընդհուպ մինչեւ ԱՊՀ-ին անդամակցությունը, ապա չի կարելի մեծ վստահություն ունենալ Ռուսաստանի տեւական չեզոքության վրա, եւ անհրաժեշտ է հարցը կարգավորել ՄԱԿ-ի ուժերի միջոցով: Ղարաբաղցիների հիշողության մեջ դեռ թարմ է սաֆոնովյան ռեժիմը, եւ նրանք հազիվ թե համաձայնվեն ռուսական խաղաղարար ուժերի տեղաբաշխմանը հակամարտության գոտում, մանավանդ որ, ամենայն հավանականությամբ, Ադրբեջանը հանձնելով իր վրա կվերցնի գորշի ծախսերը՝ ինչպես ասում են, դրանից բխող բոլոր հետեւանքներով: Եւ այնուամենայնիվ, քաս երեւույթին միակ ելքը խաղը մինչեւ վերջ հասցնելն է, որովհետեւ սեփական նախաձեռնությամբ խաղից դուրս գալը կարող է բանկ արժենալ ինչպես Ղարաբաղի, այնպես էլ Հայաստանի համար: Իսկ խաղը շարունակել՝ նշանակում է դարաբաղցիներին վերջնականապես դարձնել պատերազմի հոգեբանությամբ ապրող եւ կյանքի իմաստը պատերազմում գտնող ժողովուրդ, բանակը դարձնել ինքն իրեն պահող եւ այդ անհրաժեշտությունից դրդված ռազմական գործողությունները շարունակող ստորաբաժանումների միություն, որոնց զինվորները ճակատամարտերի միջեւ ընկած ժամանակահատվածներում խոսում են բացառապես կանեփի աղաստվող բերքի մասին կամ թղթախաղով զբաղվում եւ այլն:

Իսկ մինչ այդ կյանքը շարունակվում է, եւ Ղարաբաղի կենտրոնական շրջաններում, որտեղ կյանքի մար: Իսկ խաղը շարունակել՝ նշանակում է դարաբաղցիներին վերջնականապես դարձնել պատերազմի հոգեբանությամբ ապրող եւ կյանքի իմաստը պատերազմում գտնող ժողովուրդ, բանակը դարձնել ինքն իրեն պահող եւ այդ անհրաժեշտությունից դրդված ռազմական գործողությունները շարունակող ստորաբաժանումների միություն, որոնց զինվորները ճակատամարտերի միջեւ ընկած ժամանակահատվածներում խոսում են բացառապես կանեփի աղաստվող բերքի մասին կամ թղթախաղով զբաղվում եւ այլն:

Իսկ մինչ այդ կյանքը շարունակվում է, եւ Ղարաբաղի կենտրոնական շրջաններում, որտեղ կյանքի

ի ամենաբարձր պորտերում կան մարդիկ, որոնք իսկապես համոզված են, թե Ղարաբաղն ի վերջո անկախություն ձեռք կբերի, եւ որ դա Հայաստանին միանալու միակ ուղին է: Ճիշտ է, ավելի սրափ եւ իրատես մտածողները կարծում են, որ չի բացառվում Ղարաբաղի գոյությունն Ադրբեջանի կազմում կոնֆեդերացիոն հիմունքներով, սակայն պայմանով, որ մի քանի տարով այն լինի որեւէ խոշոր տերության, կամ ավելի լավ՝ ՄԱԿ-ի պրոտեկտորատ, բախման գոտում ՄԱԿ-ի զինվորների տեղակայմամբ: Այդ դեպքում նրանք իսկապես հասկանալի են համարում, որ խոսք անգամ լինել չի կարող Լաչինի եւ Քելբաջարի շրջանների մասին: Այս տեսակետի կողմնակիցները նկատելիորեն հիասթափված են լեգգիներից եւ բալիշներից, որոնց վրա իրենց քաղաքական հաշվարկներում քաս երեւույթին հույսեր էին դրել՝ միաժամանակ հասկանալով, որ նրանց ակտիվությունն ամենից առաջ Ռուսաստանից է կախված: Ամենասարբեր շրջանակներին մտահոգություն է պատճառում նաեւ Հայաստանի անփոփոխ դիրքը՝ միջազգային ասյաններում եւ հանրության առջեւ սեփական վարկը չկորցնելու համար Ղարաբաղի վրա ճնշել ժամանակ-անժամանակ չադարացված զիջումների գնալու:

Շատերի մոտ վստահություն կա, թե պատերազմը մոտենում է ավարտի կամ գոնե եկել է հակամարտությունը սառեցնելու ժամանակը (ճիշտ այդպես էին մտածում մարդիկ նաեւ Շուշիի եւ Լաչինի ազատագրումից հետո): Իսկ այդ դեպքում այստեղ բոլորը համակարծիք են, Ղարաբաղը կարճ ժամանակում դրախտ կդառնա: Մինչեւ տարեվերջ Ղարաբաղն ի վիճակի կլինի ոչ միայն ինքն իրեն ապահովել էլեկտրաէներգիայով, այլեւ ավելցուկը տալ Հայաստանին, իսկ եթե վառելիք լինի, ինքն իրեն կաղտահովի նաեւ սենդամբերի հիմնական տեսակներով: Համենայն դեպս, գյուղերում այդ առումով տագնապ չկա, իսկ Ստեփանակերտի մի շարք ձեռնարկություններ աշխատում են (իշխանությունները հույս ունեն արտադրանքն արտահանել ոչ միայն Հայաստան, այլեւ Ռուսաստան):

Մի խոսքով, հույսերը շատ են, մտահոգությունները նույնպես: Ամենատանջալին բերեւս անորոշությունն է, որովհետեւ մեկը մյուսի ետեւից ռազմական փայլուն հաղթանակներ տանող եւ այդ հաղթանակների պտուղներ դեռեւս չճաշակած ժողովուրդը վաղ թե ուշ կարող է կորցնել նաեւ հավատը զենքի եւ սեփական ուժի նկատմամբ, իսկ դա արդեն կլինի ամեն ինչի վերջը: Խաղաղություն՝ ահա թե ինչ է պետք այսօր դարաբաղցուն, եւ ահա թե ինչի համար է նա պայքարում այսօր, կորցնելով իր լավագույն զավակներին:

ԱՐՄԵՆ ԲԱԴԱՍՍԱՐՅԱՆ
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ստեփանակերտ-Երեւան

Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտը բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար հայտարարում է ընդունելություն նախադպրոցական դասընթացներում

Դասընթացներին կարող են մասնակցել բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստվել ցանկացող բոլոր քաղաքացիները, անկախ տարիքից:

Պարապմունքներն անցկացվելու են ինստիտուտի բոլոր մասնագիտությունների գծով: Փորձառու եւ հմուտ դասախոսները կդասավանդեն այն առարկաները, որոնցից տվյալ մասնագիտությունների գծով ինստիտուտում սահմանված են քննություններ: Կազմակերպվելու է նաեւ հայոց լեզու (թելադրություն) առարկայից առանձին խումբ, ինչպես հայկական, այնպես էլ ռուսական կրթություն ունեցողների համար:

- Պարապմունքներին չհաճախելու կամ որեւէ այլ պատճառով դասընթացից դուրս մնացած ունկնդիրներին մուծված գումարը չի վերադարձվում: Խմբում ունկնդիրների թիվը լինելու է 12-15:

Նախապատրաստական դասընթացներ ընդունվողները ներկայացնում են դիմում, կրթության վկայականի պատճենը (ուսումն ավարտածների համար), տեղեկանք ուսման վայրից (սովորողների համար), 1 լուսանկար (3x4 սմ չափի): Ուսման տեւողությունը 9 ամիս է: Պարապմունքները սկսվում են 1993 թ. հոկտեմբերի 4-ից, ժամը 16.15-ից: Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ հոկտեմբերի 2-ը, ամեն օր, ժամը 13-17-ը (բացի կիրակի օրերից):

Հասցեն՝ Երեւան-10, Խանջյան փողոց 5, 1-ին հարկ, թիվ 115 սենյակ:
Հեռախոս՝ 52-99-31:

ՌԵԿՏՈՐԱՏ

ԱՊՀ

Նոր տիպի ռուբլու գոտու համաձայնագրի առթիվ

Պոստֆակտում գործակալության փորձագետների կարծիքով, ռուբլու գոտու ստեղծման միջոցառումների իրագործումը կկարողանա ապահովել պետությունների առկա դրամական հաշվակարգերի գործողության որոշակի կայունություն, այն է, ռուբլու նկատմամբ կանխիկ դրամաշրջանառության մեջ օգտագործվող դրամական միավորների փոխարժեքի կայունության պահպանում, դրանց փոխադարձ փոխարկելիության ապահովում: Այդ նպատակով ռուբլու գոտու մասնակիցները պետք է հնարավորեն ապահովեն ռուբլու կայունությունը բարձր լիկվիդային ակտիվներով, բանկային գործառույթներն ու վերահսկողությունը կազմակերպեն այդ գոտու համար ընդհանուր կանոններով, վարկավորեն միմյանց, անցման ժամանակաշրջանում միմյանց դրամանիշեր վաճառեն, ոչ առեւտրային գործառնությունների փոխադարձ հաշվարկներն ապահովելու համար:

Հետագայում ռուբլու գոտու ստեղծումը կընթանա երկկողմ համաձայնագրերին համապատասխան, քանի որ գոտու մեջ մտնելու պայմանների շուրջը չի հաջողվել լիակատար համաձայնության հասնել: Այդ գոտու մեջ մտնելու համար պետություններից կպահանջվեն տարբեր ժամանակամիջոցներ: Մոտ ժամանակներս Ռուսաստանի եւ նոր տիպի ռուբլու գոտու պետություններից յուրաքանչյուրի միջեւ կնքվելիք համաձայնագրերում կսահմանվեն դրամավարկային հարաբերությունների պորտում մերձեցման ժամկետները, կմշակվեն օրենսդրությունների մերձեցման ու միասնացման մեխանիզմները:

Իրենց դրամավարկային, ֆինանսական եւ վալյուտային քաղաքականությունը համակարգելու եւ դրամական ու վարկային էմիսիայի միասնական կենտրոնի պարտականությունները Ռուսաստանի կենտրոնական բանկին հանձնելու պետությունների համաձայնությունը նրանց համար նշանակում է հրաժարում դրամավարկային հարաբերությունների պորտում իրենց ինքնիշխանության մի մասից: Սակայն երկրների օգուտը կգերազանցի նրանց կորուստները: Մասնավորապես, հնարավոր կդառնա վերացնել արժեզրկման փոխանցումը մեկ երկրից մյուսին: Ռուսաստանի կառավարության փոխվարչապետ Ալեքսանդր Շոխինի կարծիքով, համաձայնագիրը պետք է գոյատեւի գոնե մեկ տարի: Եթե այդ ժամկետի ավարտից առաջ մասնակից երկրներն սկսեն մտցնել սեփական ազգային դրամ, «այն էլ անհաղթակիրք մեթոդներով», ապա համաձայնագիրը զգալի չափով կկորցնի իր իմաստը: Լավատեղյակ աղբյուրներից ստացված տեղեկությունների համաձայն, Ղազախստանը, Ուզբեկստանը եւ Հայաստանը արագորեն ազգային դրամանիշեր են տպագրում այն դեպքի համար, եթե այդ պետությունների խորհրդարանները չընդունեն համաձայնագրերի պայմանները:

Գուցե Կրգզստանի նախագահ Ասկար Ակաեւը իրավացի լինի իր այն պնդման մեջ, թե ռուբլու գոտին 1993 թ. հետո չի լինի եւ ԱՊՀ բոլոր պետությունները իրենց ազգային դրամները կմտցնեն: Սակայն տահմանափակ համաձայնագրի եւ երկկողմ համաձայնագրերի ստորագրումը շատ կարեւոր դեր կխաղա տնտեսական դաշինքի ստեղծման մեջ: Հենց պետությունների դրամավարկային, ֆինանսական եւ վալյուտային քաղաքականության խիստ համաձայնեցումը հիմք կդառնա նախկին ԽՍՀՄ պետությունների տնտեսական միասնացման խորացման համար: ՆՏ

Կամերային երաժշտության տուն

18 սեպտեմբեր 1993 թ.

Ի պատիվ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության

Կիլիկյան Հայաստանի երաժշտության բացառիկ համերգ

Մասնակցությամբ՝ Հայաստանի հնագույն երաժշտության «Տաղարան» խմբի:

Գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր, կոմպոզիտոր ԵՐՎԱՆԴ ԵՐՎԱՆՅԱՆ:

Ներածական խոսք արվեստագիտության թեկնածու, երաժշտագետ ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ:

Սկիզբը՝ ժ. 17-ին
Տոմսերը վաճառվում են

digitised by A.R.A.R.@

Քաղաքական

ՈՒՄ ԵՎ ԻՆՉ ԵՆ ՑՈՒՅԱԴՐՈՒՄ ՇՐՋԱՆԻ ԵՐԿՈՒ ՈՒԺԵՂԱԳՈՒՅՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերջին շաբաթվա ընթացքում Հայաստանի Հանրապետության շուրջ խիստ սրվեց քաղաքական եւ ռազմական իրադրությունը: Մենք արդեն նշել ենք, որ ԼՂՀ պաշտպանության բանակի հակահարվածների հետեւանքով Ադրբեջանի հարավ-արեւմտյան շրջաններից փախստականների հոսքերը, նրանց հետագա կենտրոնացումը Իրանի պետական սահմանների մոտ բազմաթիվ կասկածներ հարուցեցին Լեռնային Ղարաբաղում հակամարտության հնարավոր միջազգայնացման վերաբերյալ: Մեր կողմից առաջ քաշվեց ենթադրություն, որ Արեւմուտքը փորձում է դա օգտագործել իբրեւ Իրանին նախազգուշական հարված հասցնելու առիթ, որը Վաշինգտոնում ու եվրոպական մայրաքաղաքներում նույնացվում է իսլամական արմատականության հետ:

Ինչպես հայտնի է, վերջերս Նյու Յորքում օկուպացիոն Ֆեդերալ դատարանը մի խումբ եգիպտացիների ճանաչեց իբրեւ նախագահ Հոսնի Մուբարաքի դեմ մահափորձի գործում կասկածյալների: Եգիպտոսի նախագահն ինքը պաշտոնապես հաստատում է, որ արմատական իսլամականները սպանում են օգնություն, այդ թվում՝ զենք, առաջին հերթին Իրանից ու Սուդանից: Մուբարաքը զգուշացրել է Թեհրանին ու Խարտումին, որ եգիպտոսի իշխանություններն ի վիճակի են Իրանի համար ստեղծել նույնպիսի խնդիրներ, որոնք արմատական կազմակերպությունների գործողությունների հետեւանքով ստեղծվել են Կահիրեի աշխարհիկ շրջանակների համար: Իսլամականների կողմից սպառնալիքի մասին տագնապով են խոսում արաբական բոլոր մայրաքաղաքներում, այդ թվում նաեւ Բաղդադում ու Տրիպոլիում:

Սակայն աշխարհիկ ու ավանդական արաբական պետությունների սպառնալիքն ընդամենը սպառնալիք է միջազգային, առաջին հերթին ամերիկյան ընկերությունների կապիտալներին ու շահերին: Հավանաբար վաշինգտոնյան ստրատեգներն իրենք էլ լավ են հասկանում, թե որքան իրական է վտանգը: Հակառակ դեպքում հազիվ թե ԱՄՆ-ը Իսրայելին պարտադրեր համաձայնել Գազայի սեկտորում ու Երիքով քաղաքում պաղեստինյան արաբների ինքնավարության հետ: Հայտնի է, որ սկսվել են պաղեստինա-հորդանանյան համաձայնության թեմայի նախնական շոշափումներ: Իսրայելի ու Սիրիայի միջեւ մշտական խորհրդակցություններ են տեղի ունենում իսրայելական զորքերի ապառազմականացման ու Գոլանի բարձունքներից դուրս բերելու մասին: Դեռեւս մեկ տարի առաջ արաբներին նման զիջում անելու մասին խոսք չէր կարող լինել: Իսրայելը, որի ղեկավարությունը դժվար թե հրաժարված լինի սխոնիզմի ստրատեգիական ծրագրերն իրագործելուց, առանց ծանրակշիռ հիմքերի երբեք եւ ոչ մի խոսման ու երաշխիքի դիմաց չէր հրաժարվի տասնամյակների ընթացքում ստեղծված անվտանգության գոտուց:

Ղարաբաղի ճակատի իրադարձություններն ի՞նչ ձեւով են կապված վերոհիշյալ փաստերի հետ: Միանգամայն ուղիղ կապերով: ԼՂՀ բանակի առաջխաղացումը, անշուշտ, պաշտպան դարձավ մարտական գործողությունների գոտուց ադրբեջանական քաղաքացիական բնակչության զանգվածային արտահոսքի: Սակայն փախստականների ընտրած ուղղությունն առնվազն տարօրինակ էր, ինչպես եւ այն, թե ինչպիսի արագությամբ այդ երեւույթին արձագանքեցին ՄԱԿ-ի համապատասխան ծառայությունները. Արմենի իրանական ափին դիմավորելով մի քանի հազար ադրբեջանցիների՝ վրաններով, դեղորայքով եւ այլն:

Իրանը դեռեւս օգոստոսի 12-ին հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, Հայաստանից պահանջելով դադարեցնել ագրեսիան Ադրբեջանի դեմ եւ զորքերը դուրս բերել գրաված տարածքներից: Օգոստոսի 14-ին Հայաստանը պատասխան հայտարարությամբ ժխտեց իր կողմից ագրեսիայի փաստը եւ ընդգծեց հանրապետության ղեկավարության հակվածությունը Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ ճանապարհով լուծման վերաբերյալ: Սակայն օգոստոսի 31-ին Իրանը հանդես եկավ նոր հայտարարությամբ, հերթական անգամ պահանջելով Ադրբեջանի դեմ ռազմական գործողությունների դադարեցում եւ նշելով, որ Իրանը չի լինի անմասն դիտորդ:

Հայտնի է, որ գործնականում Ֆիզուլու եւ Ջեբրայիլի շրջաններում ռազմական գործողությունների ծավալման հետ միաժամանակ Ադրբեջանի սահմանների մոտ բերվեցին իրանական զինված ուժերի ստորաբաժանումներ՝ օժանդակ ուսիկանության հետ: Սկզբում ենթադրվում էր, որ դա արվում է ադրբեջանական փախստականների ներխուժումը Իրանի խորքը կասեցնելու համար: Այնուհետեւ եղան հաղորդումներ, որ իրանական զորքերը բափանցել են Ադրբեջանի տարածք: Եթե առաջին հաղորդումներում խոսվում էր Նախիջեւանի Հանրապետություն բափանցելու մասին, ապա այնուհետեւ հաստատվեց Ֆիզուլու Հորադիզ ավանի մերձակայք բափանցելը: Նշվում էին նաեւ տարբեր պատճառներ. սկզբում ասվում էր, որ Իրանն ստիպված է նման քայլի դիմել՝ կապված Արախսի վրա գտնվող ինչ-որ ջրային համակարգ հսկողության տակ առնելու հետ (կամ Նախիջեւանում, կամ Հորադիզի մոտ), որը համատեղ օգտագործում են Իրանն ու Ադրբեջանը: Այնուհետեւ Իրանը հանդես եկավ ադրբեջանական փախստականների համար Հորադիզ ավանի մոտ ճամբար ստեղծել, որի համար էլ այդ գոտի են մտցվել իրանական զորքերը... Վերջապես, Իրանպրես գործակալությունը լուր տարածեց Իրանի կողմից ռազմական զորավարժություններ անցկացնելու մասին Մերենդի մոտակայքում, Հայաստանի սահմանից 70 կմ, իսկ Նախիջեւանի սահմանից՝ 50 կմ հեռավորության վրա:

Ադրբեջանական աղբյուրները տուսավույր հերքեցին այդ հաղորդումները, այդ թվում՝ ՄԱԿ-ում իրենց մշտական ներկայացուցչի մակարդակով: Իսկ ռուսական սահմանապահ զորքերի շտաբը մեղադրեց Ադրբեջանին կեղծիքի մեջ եւ Բաքվի անկախ ալիքների հիման վրա հաղորդեց, որ Իրանի գործողությունները նախաձեռնվել են Ադրբեջանի ղեկավարության խնդրանքով: Հետաքրքիր է նշել, որ ռուսական վերջին սահմանապահները այդ հանրապետությունից դուրս են բերվել դեռեւս 1993 թ. մարտի 24-ին՝ Պրիբիլի տարածքից (Թալիշսանում)... Իրականում ելել է, թե ոչ, իրանական բանակի կողմից ադրբեջանական սահմանների խախտման փաստ, անհայտ է: Սակայն Ռուսաստանի ԱԳՆ-ն չհաղաղեց նշել, որ Լեռնային Ղարաբաղում ճգնաժամն սկսել է շրջանի սահմաններից դուրս գալ ու ընթանում է հակամարտության միջազգայնացման ուղղությամբ, եւ Ռուսաստանը մտադիր չէ թույլատրել դեղորքերի վտանգավոր զարգացում: Հնարավոր է, որ պատահական չէր Ռուսաստանի սահմանապահ զորքերի հրամանատար գեներալ Նիկոլաեւի վերջերս Հյուսիսային Կովկաս ժամանելը:

Սակայն Հայաստանի հասցեին սպառնալիքախսաը համապատասխան հայտարարություններով հանդես եկան նաեւ թուրքական պաշտոնական դեմքերը՝ դեռեւս օգոստոսին: Սեպտեմբերի 3-ին հաղորդվեց Թուրքիայի ազգային անվտանգության խորհրդի նիստի մասին, որում երկրի նախագահ Ս. Դեմիրելը հայտարարեց, թե Թուրքիան պատրաստ է ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները սեփական անվտանգությունն ապահովելու համար: Այդ, Իրանը ոչ մի անգամ չի հիշատակվել, բայց բառացիորեն բոլոր զանգվածային միջոցները Թուրքիայում եւ դրա սահմաններից դուրս նշեցին, որ հայտարարության գլխավոր պատճառը հայ-ադրբեջանական ճակատում Թեհրանի դերն է եւ իրանական զորքերի բարձրացված աշխուժությունը Ադրբեջանի սահմաններում: Այսինքն, ամենից առաջ դա նշանակում էր, որ Անկարան չեզոք դիտորդ չի մնա Ադրբեջանի իրադրությանը Իրանի ռազմական միջամտության դեպքում: Այստեղ կարելի է հիշել, որ Թուրքիայի նախագահ Թանսու Չիլլերը հանդես է եկել Հայաստանի հասցեին նախազգուշացմամբ, որ Նախիջեւանի շրջանում ռազմական գործողությունների դեպքում Թուրքիան կհենարկի ազդեցության լրացուցիչ միջոցներ գործադրելու հնարավորությունները, այդ թվում՝ ռազմական, «Հյուրրիյեթ» թերթին տված հարցազրույցում հայտարարելով, որ թուրքական բանակն աղասում է իր կառավարության որոշմանը: Գրեթե միաժամանակ ռուսական «Վեստի» լրատվական ծրագիրը հաղորդեց, որ Թուրքիան նախազգուշացնում է՝ եթե Երեւանն իր զորքերն անհապաղ դուրս չբերի գրավված ադրբեջանական տարածքներից, ապա ինքն ստիպված կլինի ձեռք առնել համապատասխան միջոցներ, քանի որ անմասն չի կարող մնալ դեղորքերի արդի զարգացման պայմաններում... Խոսքն ամրապնդվեց գործով՝ Հայաստանի սահմաններին մոտեցվեց թուրքական 3-րդ դաշտային բանակը, որի մեջ հանդես եկան նաեւ թուրքական պաշտոնական դեմքերը՝ դեռեւս օգոստոսին: Սեպտեմբերի 3-ին հաղորդվեց սա Արեւմուտքի ուշադրությունն Իրանի վրա հրավիրելու Թուրքիայի առաջին փորձը չէ. անցյալ ամսին, օրինակ, Անկարան փորձեց Թեհրանին մեղադրել Քրդական բանվորական կուսակցության անդամ «ահաբեկիչներին» օգնություն ցույց տալու մեջ, որոնք հենց օգոստսին էին աշխուժացրել պարտիզանական պատերազմը Թուրքիայի դեմ դրա հարավարեւմտյան շրջաններում, այդ թվում նաեւ Իրանի եւ Հայաստանի հետ Թուրքիայի սահմանների մոտակայքում: Իբրեւ միջազգային հասարակայնության վրա Թուրքիայի կողմից ճնշման փորձի առաջարկ կարելի է գնահատել նաեւ օգոստոսի վերջին Միջին Ասիայից ու Ադրբեջանից Հայաստանի տարածքով արեւմտյան ընկերությունների կողմից նավթամուղի ու գազամուղի անցկացման ծրագրերի հանդեպ իր բացասական վերաբերմունքի մասին նրա հայտարարությունն ու հակազդեցությունը:

Իսկ արդեն սեպտեմբերի 5-ին Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլլերը հանդես է եկել Հայաստանի հասցեին նախազգուշացմամբ, որ Նախիջեւանի շրջանում ռազմական գործողությունների դեպքում Թուրքիան կհենարկի ազդեցության լրացուցիչ միջոցներ գործադրելու հնարավորությունները, այդ թվում՝ ռազմական, «Հյուրրիյեթ» թերթին տված հարցազրույցում հայտարարելով, որ թուրքական բանակն աղասում է իր կառավարության որոշմանը: Գրեթե միաժամանակ ռուսական «Վեստի» լրատվական ծրագիրը հաղորդեց, որ Թուրքիան նախազգուշացնում է՝ եթե Երեւանն իր զորքերն անհապաղ դուրս չբերի գրավված ադրբեջանական տարածքներից, ապա ինքն ստիպված կլինի ձեռք առնել համապատասխան միջոցներ, քանի որ անմասն չի կարող մնալ դեղորքերի արդի զարգացման պայմաններում... Խոսքն ամրապնդվեց գործով՝ Հայաստանի սահմաններին մոտեցվեց թուրքական 3-րդ դաշտային բանակը, որի մեջ հանդես եկան նաեւ թուրքական պաշտոնական դեմքերը՝ դեռեւս օգոստոսին: Սեպտեմբերի 3-ին հաղորդվեց սա Արեւմուտքի ուշադրությունն Իրանի վրա հրավիրելու Թուրքիայի առաջին փորձը չէ. անցյալ ամսին, օրինակ, Անկարան փորձեց Թեհրանին մեղադրել Քրդական բանվորական կուսակցության անդամ «ահաբեկիչներին» օգնություն ցույց տալու մեջ, որոնք հենց օգոստսին էին աշխուժացրել պարտիզանական պատերազմը Թուրքիայի դեմ դրա հարավարեւմտյան շրջաններում, այդ թվում՝

Լոնդոն

ԱՆՆԱԽԱԴԵՊ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ստի վիրահատությունը երեւի թե ամենաբարդն է բոլոր տեսակի վիրահատություններից: Այն առավել բարդ է, երբ կատարվում է երեխաների վրա: Իսկ հնարավո՞ր է արդյոք ստի վիրահատություն կատարել երեխայի վրա... ծնվելուց մեկ ամիս առաջ: Ոգեշնչված իրենց վերջին հաղթանակով, անգլիացի վիրաբույժները դրականորեն են պատասխանում այդ հարցին:

Անգլիական հայտնի Daily Mail օրաթերթի սեպտեմբերի 1-ի համարից տեղեկանում ենք, որ Նիսում (Ֆրանսիա) կայացած հանդիպման ժամանակ պրոֆեսոր Տայներսն ու իր գործակից տարաբան Քլարեի Շաֆեին հաջող վիրահատության ցնցող լուրը հաղորդել են ներկա գտնվող հասարակության ներկայացուցիչներին, որոնք ուրախության ու հազումի խառը զգացմունքներով են ընդունել այն:

«Այժմ արդեն երկու տարեկան դարձած աղջնակը առաջինն է, որ բարեհաջող ստի վիրահատության է ենթարկվել մոր արգանդում... նախքան ծնվելը», հայտարարել են անգլիացի բժիշկները, որոնք աշխատում են Լոնդոնի Գի հիվանդանոցում: «Սա դեռ սկիզբն է: Առաջիկա տարիներին այն կկատարելագործվի», ճշել են նրանք:

Վիրահատությունը, որը կատարվել էր սաղմի այդ ժամանակ ձիրարդի չափի ստի վրա, խոստանում է փրկել հարյուրավոր երեխաների կյանքը, որոնք ծնվելուց առաջ դատապարտված են մահվան:

Ստի փոսկանի դեֆորմացիաների վերացմանն ուղղված բարդ վիրահատությունների բնագավառում Անգլիան առաջին տեղն է գրավում աշխարհում, բայց այս մեկն իրոք եզակի հաջողված փորձ էր: Խմբի ղեկավարը՝ մանկաբույժ-տարաբան պրոֆեսոր Մայքլ Տայներսը հեռաձգել էր պաշտոնական հայտարարությունը, մինչեւ վստահ կլիներ, որ իր հիվանդն ապրելու է: Այժմ աղջնակը, որ բոլորովին առողջ է, ծնողների հետ ապրում է Իտալիայում:

Իտալացի տարաբանները երեխայի մորը խորհուրդ էին տվել դիմել անգլիացի պրոֆեսորին, այն բանից հետո, երբ ուլտրաձայնային հետազոտությունը հայտնաբերեց, որ մոր արգանդում գտնվող պտուղը տառապում է կրիտիկական առտայի ատենոզով (նեղացում), որը խոչընդոտում է արյան կանոնավոր մղումը ստի միջով: Նման դեպքերում երեխաները սովորաբար դատապարտված են մահվան հենց արգանդում կամ էլ, լավագույն դեպքում, ծնվելուց 24 ժամ հետո:

Երեխայի ծնողներն անմիջապես թռել էին Լոնդոն, որտեղ պրոֆեսոր Տայներսը զգուշացրել էր, որ վիրահատությունը բարդ է, եւ հաջողության շանսերը հիշ հնարավորություններ մի նուրբ ասեղ է մտցրել մոր որովայնը եւ այն առաջնորդել դեպի պտղի սիրտը: Ասեղին կից եղել է փոքրիկաչափ մի կաթետեր (ոլորտային լար ծայրին փոքրիկ պարկ) առտայի նեղացումը վերացնելու համար: Դժբախտաբար վիրահատության ավարտից հետո, ասեղը դուրս բերելիս



կան: Մայրն իր հղիության երեսունմեկերորդ շաբաթում էր, երբ բժիշկների խումբը ձեռնամուխ եղավ փրկելու երեխայի կյանքը: Վիրահատությունը տեղի ունեցավ տեղային անզգայացման միջոցով, որի ընթացքում գերձայնային հսկողություն սահմանելով, խորհրդատու մանկաբարձը 1.2 մմ հաստությամբ փուչիկը դայրել է, եւ բժիշկներն ստիպված են եղել հենց ստի դատերի մոտ բռնել այն: Առայժմ ոչ մի բարդություն այդ առնչությամբ չի արձանագրվել: Հետագայում գուցե, երբ աղջնակը դառնա 15-16 տարեկան, հարկ կլինի դարձյալ վիրահատել նրան, այն դուրս բերելու եւ փականը «վերանորոգելու» համար:

Պրոֆեսոր Տայներսն ասում է, որ նման վիրահատությունն առաջարկվում է ամենածայրահեղ դեպքում, երբ իսկական լուրջ վտանգ է սպառնում պտղին: Անցած 10 տարիների ընթացքում 36 նման ծայրահեղ դեպքեր են արձանագրված, որոնք բոլորն էլ ունեցել են դժբախտ վախճան: Հենց նրանց պարագայում կարելի էր օգտագործել այս վիրահատությունը: «Մենք ծնողներին զգուշացնում ենք, որ հաջողությունը երաշխավորված չէ: Գլխավոր խնդիրը կարեւորն անցկացնելն է մինչեւ պտղի սիրտը, որը հղիության փուլում ընդամենը ձիրարդի չափ է: Իսկ այս վիրահատության ամենաբարդ մասը փականի անցքը գտնելն է: Այն ընդամենը սանտիմետրի մեկուրիսազարերորդ մասն է կազմում: Ճիշտ է, չափազանց մեծ քայլ է կատարվածը, անախադեմ հաջողություն է, բայց այն դեռ գտնվում է փորձարարական փուլում», հայտնել է նա: Չնայած ասեղը դատարասված է եղել յուրահատուկ դյուրաբեռությամբ, այնուամենայնիվ բժիշկները գիտակցել են, որ երեխայի ամեն մի հանկարծակի շարժումը կարող է ճակատագրական լինել: Բարեբախտաբար նա իրեն «շատ լավ է պահել» եւ հետագայում լույս աշխարհ է եկել Իտալիայում բնական ծննդաբերությամբ:

Հոդվածից տեղեկանում ենք նաեւ, որ յուրաքանչյուր տարի Անգլիայում ծնված երեխաներից 10-12-ը տառապում է առտայի ատենոզով, եւ որ այս վիրահատությանը նախորդել են երկու ուրիշներ, որոնք սակայն հաջող ավարտ չեն ունեցել: Դրանցից մեկը կատարվել է 1990 թվականին ծնված Միշել Վերմիլիոնի վրա, որն ընդամենը հինգ շաբաթ է ապրել: Լսելով այս հաջող վիրահատության լուրը, նրա մայրն ասել է, «Հրաշալի է: Ուրեմն Միշելի մահը զուր չի անցել»:

Պատրաստեց
ՀԱԿՈԲ ՇՈՒԼՄԿՅԱՆԸ

Կարծ

Ռուսաստանը կօգնի Աֆղանստանին

Սեպտեմբերի 8-ին Քաբուլից Դուշանբե ժամանած Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւը հինգշաբթի առավոտյան տաջիկա-աֆղանական սահման մեկնեց իրավիճակին ծանոթանալու նպատակով: Նույն օրը նա տեսք է այցելեր Մազե Կրգզստան: Մինչեւ առաջ նախարարն ասաց, որ Ռուսաստանն ու Աֆղանստանը պայմանավորվել են համակարգված ձեւով հասնելու տաջիկա-աֆղանական սահմանի իրադրության կայունացմանը: Նա ավելացրեց, որ Քաբուլում Աֆղանստանի նախագահ Բուրհանուդդին Ռաբանիի, վարչապետ Գուլբեդին Հեքմաթիարի եւ արտգործնախարար Հիդայաթ Ամին Արաբայի հետ իր բանակցությունների ժամանակ աֆղանական կողմը խոստացել է այսուհետեւ ելնել այն սկզբունքից, որ «խորհրդա-աֆղանական հարաբերություններում եղած բացասական կողմերը պետք է անցյալ դառնան»: Կողմերը հայտարարել են փոխըմբռնման հիման վրա հարաբերություններն ուժեղացնելու անհրաժեշտության մասին: Տաջիկստանի առնչությամբ Ռուսաստանի եւ Աֆղանստանի ներկայացուցիչները հայտարարել են, որ իրենք չեզոք են Դուշանբեի կառավարության եւ տաջիկական ընդդիմության հանդեպ:

Միաժամանակ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը նշում է, որ Աֆղանստանի վարչապետ Հեքմաթիարը հայտարարել է, թե «տաջիկա-աֆղանական սահմանում ռուսական զորքերի ներկայությունը անցանկալի եւ վնասակար երեւույթ է»: Նրա կարծիքով, ընդհանուր սահմանի պաշտպանության հարցերը վերաբերում են նախ եւ առաջ Աֆղանստանին եւ Տաջիկստանին, ուստի այդ խնդիրները «չի կարելի լուծել ռազմական ուղիով»: Նա հայտնել է, որ Աֆղանստանի ղեկավարությունը որոշել բարի կամքի արտահայտություն մոտ ժամանակներս ազատ կարձակի ռուսաստանցի մի քանի ռազմագերիների:

Քաբուլի բանակցությունների ավարտից հետո ստորագրվել է ռուս-աֆղանական հայտարարություն, որով Ռուսաստանը պատրաստակամություն է հայտնում մասնակցելու պատերազմից ավերված Աֆղանստանի տնտեսության վերականգնմանը: Մոտ ժամանակներս Աֆղանստան կմեկնեն ականազերծման ռուսաստանցի մասնագետներ:

Բանակցություններում նաեւ հայտարարվել է ռազմագերիների վերադարձման համար բոլոր ջանքերի գործադրման անհրաժեշտության մասին: Այդ նպատակով կստեղծվի փախստականների ու ռազմագերիների հանձնաժողով: ԻԴ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Անձնականը վտանգի մեջ է

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին ընդհանուր ժողովին առաջարկել է ծիրակային համաձայնագիր նախապատրաստել ՄԱԿ-ի ուժերի եւ խաղաղապահ անձնակազմի անվտանգության ապահովման վերաբերյալ: Այդ մասին ասվում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի «ՄԱԿ-ի գործողությունների անվտանգությունը» զեկուցագրում, որը ազգերի ընկերակցության կենտրոնակայանում տարածվել է որպես ընդհանուր ժողովի փաստաթուղթ:

ՄԱԿ-ի անձնակազմը, ճշմում է զեկուցագրում, ավելի ու ավելի մեծ չափով է սպառնված լինում իր պարտականությունները կատարել բազմաթիվ վտանգավոր պայմաններում: Արդյունքում ծառացած է անվտանգության ապահովման խնդիրը:

1992 թ. ամեն ամիս զոհվել է միջին հաշվով 1 աշխատակից, 1993 թ. անցած ամիսներին միջին հաշվով 2 շաբաթվա ընթացքում զոհվել է 1 աշխատակից: Առայժմ չի հաջողվել պարզել աշխատակիցների մահվան համար մեղավոր անձանց եւ պատասխանատվության կանչել նրանց: Կազմակերպությունը վիճակագրական տեղեկություններ չունի ոչ կառավարական կազմակերպությունների անձնակազմի զոհերի մասին, սակայն ըստ հաղորդումների, նրանց թիվը նույնպես աճում է: Ինչ վերաբերում է զինծառայողներին, 1992 թ. զոհվել է 51 մարդ, իսկ 1993 թ. առաջին կիսամյակում 97 մարդ, ասվում է զեկուցագրում:

Որպես կարճաժամկետ ռազմավարություն, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն ընդհանուր ժողովին կոչ է արել «ընդունել հայտարարություն, որով պետք է ուշադրություն բեւեռվի ՄԱԿ-ի ուժերի եւ անձնակազմի անվտանգության ու պատշաճության կարեւորության վրա»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Բանակցություններ Սեւծովյան նավատորմի շուրջ

Բորիս Ելցինի նոր կարգադրության համաձայն, երկրի ղեկավարությունը հանձնարարված է բանակցել ուկրաինական կողմի հետ, հարցադրում է Ռուսաստանի նախագահի մամուլի ծառայությունը: Բանակցությունների թեման կլինի Մասանդրայում (Ղրիմ) սեպտեմբերի 3-ին Ռուսաստանի եւ Ուկրաինայի նախագահների հանդիպման ժամանակ Սեւծովյան նավատորմի խնդիրների կարգավորման շուրջ ձեռք բերված համաձայնությունների կենսագործումը:

Բանակցություններում Ռուսաստանի պատվիրակությունը կգլխավորի Յուրի Դուբինինը:

Սեպտեմբերի 3-ի հանդիպման ժամանակ Ելցինը եւ Կրավչուկը ստորագրել էին «Արձանագրություն Սեւծովյան նավատորմի խնդիրների կարգավորման մասին»: Դրա համաձայն Ռուսաստանի եւ Ուկրաինայի ղեկավարությունները հանձնարարվում է «մեկամսյա ժամկետում՝ լրամշակել այն համաձայնագրի մշակման առնչվող բոլոր հարցերը, որոնք համաբաստասխան ամբողջ Սեւծովյան նավատորմը Ղրիմում գտնվող իր ամբողջ ենթակառուցվածքով օգտագործվում է Ռուսաստանի կողմից եւ ռուսական խորհրդանիշեր ստանում այն առումով, որ ռուսական կողմը համաբաստասխան վերջնահաշիվներ է կատարելու Սեւծովյան նավատորմի այն կեսի, ներառյալ ենթակառուցվածքի վերաբերյալ, որը նախորդ համաձայնություններով ղեկավարվել է անցներ Ուկրաինային»:

Մասանդրայի հանդիպման ժամանակ Ուկրաինայի եւ Ռուսաստանի վարչապետները ստորագրեցին «Արձանագրություն Ուկրաինայում տեղաբաշխված ռազմավարական միջուկային ուժերի բոլոր միջուկային մարտալիցքերը Ռուսաստան տեղափոխելու մասին»: Լեոնիդ Կուչման եւ Վիկտոր Չեռնոմիրդինը պայմանավորվեցին, որ «Ուկրաինայի Գերագույն Խորհրդում START-1 պայմանագրի վերացումից հետո Ուկրաինայի կառավարությունը վավերացման օրվան հաջորդող 24 ամսվա ընթացքում աղահովում է Ուկրաինայում տեղաբաշխված ռազմավարական միջուկային ուժերի միջուկային մարտալիցքերի փոխադրումը Ռուսաստան դրանք կազմաքանդելու եւ ոչնչացնելու նպատակով»:

ԻԴ

Լուրեր-Հոլոր

Զինակից եղբայրնե՞ր

Սեպտեմբերի 9-ին Վաշինգտոն-պոստը հոդված է հրապարակել «Զինակից եղբայրներ» վերնագրով, որը նվիրված է Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովի ԱՄՆ կատարած այցին: Թերթը գրում է. «Նախկինում, երկրորդ աշխարհամարտին հաջորդած չորս տասնամյակների ընթացքում ԱՄՆ-ը վախենում էր, որ հանկարծ վիթխարի խորհրդային բազմական մեքենան լավ համակարգված ցատկ չկատարի Արեւմտյան Եվրոպա: Նոր երկյուղների աղբյուրն այն է, ինչ կարող է տեղի ունենալ նախ եւ առաջ նախկին Խորհրդային Միության սահմաններում: Մտահոգություններից մեկն այն է, որ Ռուսաստանի զինված ուժերը կարող են վերածվել անկայուն ազգայնական բեկորների, մյուսն այն է, որ ռուսական բանակի գլխավոր տարը կարող է հանդես գալ իր երկրում ծնունդ առնող ժողովրդավարական ու ազգայնական բարեփոխումների դեմ: Ինչպես հայտարարեց վարչակազմի ղեկավարը, ամերիկացի բազմագետները գտնում են, որ ռուսաստանցի զինվորականները նախագահ Բորիս Ելցինի համար ամենակարեւոր ընտրողներն են: Ծագող հարաբերություններում առկա է նուրբ կողմ, քանի որ ամերիկացի սպաները տարբեր կարծիքներ ունեն այն հարցում, թե պե՞տք է արդյոք ռուսաստանցի գործընկերներին շատ բան տրամադրել տեխնոլոգիայի դոկտրինայի եւ զորքերի օպերատիվ կառավարման բնագավառում»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Աֆրիկայի զարգացմանը նվիրված միջազգային խորհրդաժողով

Սոցիալական միասնականացում, չքավորության վերացում եւ բնակչության զբաղվածության ապահովում՝ այս եւ այլ հարցեր կքննարկվեն ՄԱԿ-ի եւ Աֆրիկայի Միասնության կազմակերպության 46-րդ ամենամյա խորհրդաժողովում, որը բացվել է ազգերի ընկերակցության կենտրոնակայանում: «Սոցիալական զարգացումն անվտանգության նոր ըմբռնում է» նշանաբանով անցկացվող խորհրդաժողովին մասնակցում են 38 երկրների ոչ կառավարական կազմակերպությունների 1000-ից ավելի ներկայացուցիչներ: Դրա մասնակիցները կքննարկեն մասնավորապես Աֆրիկայում հակամարտությունների կանխման բնագավառում ՄԱԿ-ի եւ Աֆրիկայի միասնության կազմակերպության համախորհրդակցությունը, շրջանում ժողովրդավարական վերափոխումների, այդ թվում ընտրությունների ընթացքի վերահսկումը: Խորհրդաժողովը կավարտվի սեպտեմբերի 10-ին:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Կրգզստանում վախենում են խոլերայի տարածումից

Կրգզստանի հակահամաճարակաբանական արտակարգ հանձնաժողովը որոշում ընդունեց ուժեղացնելու խոլերայի կանխման միջոցառումները: Ինչպես հայտնեցին հանրապետության առողջապահության նախարարությունում, դա պայմանավորված է Ուզբեկստանում, Տաջիկստանում եւ Ղազախստանում այդ հիվանդության տարածմամբ: Սանիտարական կարանտինային ծառայությունները բերված են «լիակատար մարտավիճակի»: Միջինասիական այդ պետությունների սահմանամերձ պահակակետերում ստեղծված են կարանտինային ծառայություններ, որոնք կվերահսկեն երկաթուղային եւ ավտոմոբիլային տրանսպորտը: Որոշում է ընդունվել նաեւ ժամանակավորապես՝ մինչեւ հոկտեմբերի 1-ը դադարեցնելու դեպի Պակիստան, Հնդկաստան, Թուրքիա եւ Իրան կատարվող բոլոր չարտերային ավեւտրային ուղերթները: Մասնավոր անձանց արգելվում է զովացուցիչ ըմպելիքներ, սառեցված սնունդաբերք վաճառել: Ուժեղացված է վերահսկողությունը խմելու ջրի, մաքրման կառույցների եւ արտաքին միջավայրի օբյեկտների՝ գետերի, լճերի, ջրանցքների որակի նկատմամբ: Հանրապետական սանիտարահամաճարակային ծառայության տվյալների համաձայն, Կրգզստանում առայժմ խոլերայով հիվանդանալու որեւէ դեպք չի արձանագրվել:

ԻԴ

digitised by A.R.A.R.@

Լուրերի Հոսք

«Բելառուսը» կվերաբերի Խորհրդային Միությունը

Բելառուսի խորհրդարանի ամենամեծաթիվ «Բելառուս» խմբակցությունը մտադիր է աշնանային նստաշրջանին դնել ԱՊՀ վերաբերյալ բելովեժյան համաձայնությունները չեղյալ հայտարարելու հարցը: Ինչպես հայտնել է խմբակցության համակարգող, ԱՊՀ գծով Բելառուսի պետքարտուղարի տեղակալ Գենադի Կոզլովը, «այդ փաստաթղթի մեծ թվով կետեր պրակտիկայում սպառել են իրենց, եւ հասունացել է զարգացման նոր ուղի փնտրելու անհրաժեշտությունը»: Նա հայտնեց նաեւ, որ խմբակցության պատգամավորները, այլ կուսակցությունների առաջնորդները եւ մեծ ձեռնարկությունների ղեկավարները որոշել են ուղերձներ հղել նախկին Խ. Միության հանրապետությունների ղեկավարներին, խորհրդարաններին ու կառավարություններին կոչ անելով ստեղծել կոնֆեդերացիայի՝ միջպետական ինտեգրացման նոր, ավելի բարձր փուլ:

Չվիաղականները պահանջներ են ներկայացնում

Արեւմտյան Վրաստանում իրավիճակը մնում է լարված: Ընդդիմության ղեկավարները պահանջում են իշխանություններից հրաժարվել Ռուսաստանի հետ բանակցություններ վարելուց ու որեւէ համաձայնագիր կնքելուց, ինչպես նաեւ զորքերի դուրս բերում Փոթի, Սամտրեդիա եւ Քութաիսի հաղաքներից: Չվիադիստ զինյալների ղեկավար Լոթի Կոբալիան ուղերձ է հղել Աբխազիայի Գլխ նախագահ Արծինբային, առաջարկելով վերականգնել Սենակի շրջկենտրոնից դեպի Ռուսաստան գնացքների երթեւեկությունը, որպես վրացիների եւ աբխազների միջեւ վստահության վերականգնման առաջին քայլ: Կոբալիան երաշխավորում է երթեւեկության անվտանգությունը «իր» տարածքում: ԻՖ

Փրկարարները պատանդ վերցվեցին

Վրաստանի իշխանությունները երեկ ուղղաթիռ ուղարկեցին Աբխազիայում գտնվող սվանական Աժարա գյուղը, որպեսզի վերադարձնեն 5 պատանդներին, որոնք նախորդ օրը ուղարկվել էին Մարուխի լեռնանցքում վթարի ենթարկված աբխազական ուղղաթիռի անկման հանգամանքները ուսումնասիրելու եւ զոհվածների դիակները տեղափոխելու համար: Ընդամենը պատանդ էին վերցվել 15 հոգի, որից 10-ը ազատվել էին նախորդ օրը: Հենց նրանք էլ դիակները տեղափոխել էին Գուդաուտա: Աբխազիայում կարգավորման միացյալ հանձնաժողովի օտարական ներկայացուցիչները, ի նշան բողոքի, երեկ հրաժարվել էին մասնակցել նիստին: ԻՖ

Նոր տեղեկատու

1994 թ. մարտին «Դերբեր էնդ փիրեյջ լորդ» հրատարակչությունը լույս կընծայի «Ով ով է նախկին ԽՍՀՄ-ում» տեղեկատուն: Այդ հրատարակչությունը, որը հիմնադրվել է 1808 թ., մեծ համբավ է վայելում շնորհիվ իր «Ով ով է» միջազգային տեղեկատուների: Ինչպես ՌԻԱ-ին հաղորդել է հրատարակչության ներկայացուցիչ Վլադիմիր Վոլդիրը, տեղեկատուն կլինի առաջինը Արեւմուտքում, որը լիարժեք տեղեկություն կտարուանակի նախկին ԽՍՀՄ հանրապետությունների կառավարական, գործարար, արդյունաբերական եւ ֆինանսական շրջանների մասին: Այդպիսի հրապարակման անհրաժեշտությունը բացահայտ է. Արեւմուտքի հաղթական գործիչները եւ գործարարները չունեն ճշգրիտ տվյալներ իրենց գործընկերների մասին նորանկախ պետություններում: Նոր ճեղեկատուն, որն ունենալու է 40 հազար տպաքանակ, նախատեսվում է տարածել կառավարության անդամների, նախարարների, խոշորագույն արդյունաբերական եւ ֆինանսական ձեռնարկությունների, ինչպես նաեւ առաջատար լրագրողների շրջանում: Սնարտ ՌԻԱ

Մշակույթ

Հայկական բալետը Իսպանիայում

Մենք արդեն հայտնել էինք Հայաստանի ազգային օպերայի եւ բալետի թատրոնի բալետային խմբի եւ մենակատարների Իսպանիա մեկնելու մասին, որ նրանք հրավիրվել էին մասնակցելու Ալբասետե քաղաքի միջազգային փառատոնին: Պարարվեստի բնագավառում բարի համարում ունեցող գեղարվեստական այս ատուգաստեսին, որն այս տարի անցկացվում էր 38-րդ անգամ, հայկական բալետն առաջին անգամ էր ներկայացվում: Ասել է, թե միայն մասնակցության փաստն իմքնին արդեն կարելի է դիտել որպես հաջողություն եւ հայկական բալետի միջազգային ճանաչման եւս մեկ վկայություն:

Վերջերս էր, որ մեր թատրոնի բալետային խումբը մեծ վերելքով մասնակցեց Փարիզում Ջուզեպպե Վերդիի «Այդա» օպերայի միջազգային բեմադրությանը (բեմադրիչ՝ Վիտորիո Ռոսսի): Ահա այժմ էլ իսպանական ելույթը, որ տեղի ունեցավ վերոհիշյալ փառատոնի շրջանակներում, օգոստոսի 27-ին: Այն տեղի էր ունենում անսովոր պայմաններում, մոտ հինգ հազար տեղանոց բացօթյա դահլիճում: «Խիտ ու հագնված էր փառատոնային ողջ ծրագիրը, ասում է թատրոնի գեղարվեստական ղեկավար Տիգրան Լեւոնյանը: Ընդամենը մեկ փորձից հետո մեր պարողները կարողացան իրենց հիանալի դրսեւորել հաջորդ օրը կայանալիք ներկայացման ժամանակ»:

Փառատոնի կազմակերպիչների առաջարկությամբ Ալբասետե էր տարվել բալետային մի ծրագիր, որ ներառում էր մենակատարություններ Չայկովսկու «Շչելկունչիկ», Ադանի «Ժիզել» եւ Արամ Խաչատրյանի «Գայանե» բալետներից: Դրանց կատարմամբ հանդես եկան թատրոնի թե՛ առաջատար, թե՛ սկսնակ, բայց շնորհալի արտիստները: Այստեղ, հանդիսականների վրա մեծ տպավորություն թողեց Երեւանի պարարվեստի ուսումնարանն այս տարի ավարտած եւ օպերայի ու բալետի թատրոնի արտիստական կազմը վերջերս համալրած դեռատի պարուհի Հռիփսիմե Բաղդասարյանը, որը նույն օրը հանդես եկավ 2 դերերի կատարմամբ՝ արտայադուստր «Շչելկունչիկում» եւ Ժիզել Ադանի համանուն բալետում: Գայանեի դերը Արամ Խաչատրյանի համանուն ստեղծագործությունից կատարեց հանրապետության ժողովրդական արտիստուհի Էլվիրա Մնացականյանը: Հանդիսականները ծափողջույններով Լին զնահատում Արմեն Գրիգորյանի, Ֆելիքս Գրիգորյանի, Հայկ Քաջբերունյանի, Մարինա Դիվանյանի ելույթները, Ի դեպ, երկար ընդմիջումից հետո՝ կառված ոճի վնասվածքի հետ, կրկին բեմահարթակ բարձրացավ սիրված արտիստ Հովհաննես Դիվանյանը, որն այս անգամ կատարեց անտառապահ Հանսի դերը «Ժիզելում»:

Թե ինչ տպավորություն է թողել հայկական պարախմբի ելույթը փառատոնի կազմակերպիչների եւ մասնակիցների վրա, կարելի է պատկերացնել՝ տեղեկանալով իսպանական մամուլի հիացական արձագանքներին մեր պարող պարուհիների, օպերայի եւ բալետի թատրոնի գլխավոր բալետմայստեր Վիկեն Գալստյանի մասին: Այստեղ, «La Verdad» թերթը ծավալուն հարցազրույց է տպագրել Վիկեն Գալստյանի հետ ազգային բալետի հիմնական սկզբունքների եւ դրա ուրույն դիմագծի մասին: Իսկ «La Tribuna de Albacete» թերթը մի ամբողջ էջ է նվիրել Հայաստանի ազգային օպերայի եւ բալետի թատրոնին, նրա անցյալի հարուստ ղեկավարությանը եւ վերջին շրջանի հաջողություններին: Հոդվածագիրը մասնավորապես գրում է. «Ընդհանուր տպավորությունն այնքիսին է, որ հայկական բալետը լավագույնս է համադրում ավանդույթները նորարարության հետ»: Փառատոնին անդրադարձած որեւէ նյութ կամ հեղինակ չէր շրջանցել մեր արվեստագետների ելույթը, իսկ մասնակիցների կազմը ներկայացուցչական էր եւ ընդգրկում էր Իսպանիան ու Իտալիան, Ֆրանսիան ու Նորվեգիան, Մեքսիկան ու Թայլանդը:

Այս հյուրախաղերի առնչությամբ Մադրիդում կազմակերպվեց մեզանում վերջերս բեմադրված Դոնիցետտիի «Պողիկտոս» օպերայի տեսաժապավենի ու սահիկների դիտում, որին արվեստաբերներից բացի ներկա էին նաեւ աշխարհի թատրաերաժշտական առաջատար մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչներ: Այն մեծ հետաքրքրություն առաջացրեց, իսկ գործնական արդյունքն այն էր, որ հրավեր ստացվեց հաջորդ տարի «Պողիկտոսը» ներկայացնելու Իսպանիայում:

ԼԵՎՈՆ ԼԱՇԻԿՅԱՆ

ԱԶԳ - ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈԲՅԱՆՆ ՈՒ ԼՅՈՒԲՈՎ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԱՆ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Ինչպես հայտնի է, երբ ՀՀ բասկետբոլի կանանց հավաքականն ադրիլ-մայիս ամիսներին գտնվում էր Ֆրանսիայում եւ մասնակցում էր Թուլուզի միջազգային մրցաշարին, մեր 3 աղջիկներին՝ Անահիտ Հակոբյանին, Լյուբով Ալեքսանդրովա-Քոչարյանին եւ Էմմա Բեգլարյանին հրավիրել էին 1993-94 թթ. մրցաշրջանում հանդես գալ ֆրանսիական թիմերում, եւ համապատասխան պայմանագրեր էին կնքվել:

Ֆրանսիան այն երկրներից է, որտեղ ներգաղթածների ու փախստականների թիվը մեծ է, գործազրկության տոկոսն էլ բարձր: Եւ կառավարությունը ստիպված է դեմն առնելու համար վերամշակել օրենքները: Այդ պատճառով մեր բասկետբոլիստուհիները ստիպված էին հաղթահարել դժվարին արգելքներ: Պարզվեց, որ մուտքի իրավունք ձեռք բերելու համար անհրաժեշտ է թույլտվություն ստանալ 4 կազմակերպություններից՝ արտաքին եւ ներքին գործերի նախարարություններից, սպորտի դեպարտամենտից եւ միջազգային ներգաղթ կոմիտեից (OMI): Բանակցությունները տեւեցին գրեթե 3 ամիս եւ դեռ լավ է, որ Հայաստանում գտնվող Ֆրանսիայի դեսպանատունը պատրաստակամ էր օգնելու աղջիկներին, իսկ Լյունակի «Սերենա» թիմի մարզիչ Ժան-Պաուլ Պուդոնան, որ հրավիրված են Հակոբյանն ու Ալեքսանդրովա-Քոչարյանը, նախանձելի համառություն դրսեւորեց: Եւ եթե չլիներ նաեւ ՀՀ բասկետբոլի ֆեդերացիայի նախագահության պատվավոր անդամ եւ Ֆրանսիայում մեր պատգամավոր Ներկայացուցիչ Սիարոն Բոյաջյանի ակտիվ եւ հոգնաստաջ միջամտությունը, գործը դժվար թե գլուխ գար:

Ֆրանսիայի կանանց 1-ին դիվիզիոնի (բարձրագույն խումբ) հերթական առաջնությունը, որտեղ հանդես է գալիս նաեւ Լյունակի «Սերենա» թիմը, մեկնարկելու է վաղը, իսկ Անահիտ Հակոբյանն ու Լյուբով Ալեքսանդրովա-Քոչարյանը միայն վերջին պահին մուտքի վիզա ստացան եւ երեկ մեկնեցին Ֆրանսիա: Առաջնությունը տեւելու է մինչեւ ադրիլ: Աղջիկների պայմանագիրը կնքված է 8 ամսով, բայց մնացել է 7-ը: Մեր երկու փորձառու բասկետբոլիստուհիներն ամենայն լրջությամբ են պատրաստվել պատասխանատու փորձաշրջանին, լավ իմանալով, որ հրավիրված խաղացողներից պահանջներն ապանձնահատուկ են լինելու: Ֆրանսիայի 1-ին դիվիզիոնի յուրաքանչյուր թիմ պարտադիր այլ երկրներից հրավիրված խաղացողներ ունի եւ ըստ մրցակարգի դրանց թիվը չպետք է անցնի երկուսից:

Լյունակում բասկետբոլը շատ են սիրում եւ ամեն անգամ մեծ թվով մարդաստներ են ներկայանում «Սերենայի» խաղերին: Ըստ վկայությունների, անցած մրցաշրջանում հանդիսականների թվով այս թիմն առաջատարների թվում էր:



Ֆրանսիայի 1-ին դիվիզիոնի առաջնությանը մասնակցում է 12 թիմ: Լյունակի «Սերենան» անցյալ տարի գրավել է 10-րդ տեղը: Այս տարի էլ թիմի նպատակները համեստ են: Ինչպես խոստովանել է «Սերենայի» գլխավոր մարզիչ Ժան-Պաուլ Պուդոնան, իրենք երջանիկ կլինեն, եթե թիմը գրավի 8-րդ տեղը: Ըստ մրցակարգի, նախնական փուլից հետո 1-ին 8 տեղ գրաված թիմերը հետո զավթային մրցակարգով որոշելու են մրցանակակիրներին եւ եվրոպական մրցաշարերի մասնակիցներին, իսկ վերջին 4 տեղերում հայտնված թիմերը պետք է պայքարեն 1-ին դիվիզիոնում իրենց տեղը պահպանելու համար:

Վաղը հենց 1-ին տուրում շատ դժվար փորձություն է սպասում «Սերենային», որը Վալանսիեն քաղաքում մրցելու է Ֆրանսիայի առաջնության բronզե մեդալակիր «Վալանսիեն-Orch» թիմի հետ, որը Ռոնկոտիի գավաթի խաղարկությունում հասել է մինչեւ կիսաեզրափակիչ: Ֆրանսիայի այս ուժեղագույն թիմում ընդգրկված են ամերիկացի 2 խաղացող: «Վալանսիեն-Orch» քաջ ծանոթ է մեր աղջիկներին: Ֆրանսիա կատարած ուղեւորության ժամանակ ՀՀ հավաքականը 3 անգամ մրցել է այս ինքնատիպ թիմի հետ եւ մեկ հաղթանակ տարել (Հավրում) ու 2 պարտություն կրել (Վալանսիենում ու Փարիզի արվարձաններից մեկում): Անահիտ Հակոբյանն ու Լյուբով Ալեքսանդրովա-Քոչարյանը մեկնել են միանգամից Վալանսիեն եւ, ինչպես ասում են, նավից դեպի է մնացել մեկնեն դարահանելու: Ինչ վերաբերում է Էմմա Բեգլարյանին, ապա նրան հրավիրել էր Թուլուզի ASPTT ակումբը, որը 2-րդ դիվիզիոնում էր եւ իրավունք ուներ արտասահմանցի մեկ խաղացող ունենալ, սակայն թիմը նահանջել է 3-րդ դիվիզիոն, իսկ այստեղ չի թույլատրվում այլ երկրներից խաղացողներ հրավիրել: ■

«Հայաստանը» դուրս մնաց եվրոպական խաղարկությունից

«Հայաստան» շախմատային թիմը դուրս մնաց եվրոպական ակումբների գավաթի խաղարկությունից: Այս մասին հեռախոսով հայտնեց Հունգարիայի շախմատային ֆեդերացիայի ներկայացուցիչը Բալանբերենի քաղաքից, որտեղ անցկացվում է մրցաշարի սկզբնական մասը:

Ինչպես հայտնի է, վիճակահանությամբ առաջին փուլում մեր շախմատիստներին բաժին էր ընկել Հունաստանի չեմպիոն «Սկանկիստիկոս օմիլոս կալիթեաս» ակումբը, որի կազմում գրոսմայստեր կամ հանրաճանաչ այլ շախմատիստ չկար: Բնական է, որ նախապատվությունը տրվում էր մեր թիմին, որում ընդգրկված էին ազգային օլիմպիական հավաքականի անդամներ Սմբատ Լդոյանը, Արտաշես Մինասյանը, Ատոմ Անասասյանը, Արտակ Պետրոսյանը, աշխարհի առաջնության միջմգայինի մասնակից Տիգրան Նալբանդյանը, աշխարհի պատանեկան առաջնության մրցանակակիր Հովհաննես Դանիելյանը (մարզիչ եւ պահեստային մասնակից՝ Վլադիմիր Հայրապետյան): Եւ իսկապես, «Հայաստան» թիմն անցավ հունական արգելքը, ընդ որում, դա հատար նույնիսկ հարկ չեղավ նստելու խաղաշախտակների առջեւ, քանի որ աթենքցի շախմատիստները պարզապես... չժամանեցին մրցավայր: Բացառված չէ, որ նրանք, հաշարելով, որ ահեղ մրցակցի դեմ հաջողության հույսեր գործնականում չկան, որոշեցին խուսափել լրացուցիչ ծախսերից: Հաջող փուլում «Հայաստանին» արդեն դժվարին մրցակից էր սպասում Ռուսաստանի ներկայացուցիչ Չելյաբինսկի «Խորդա», որի կազմում հայտավորված էին մասնավորապես գրոսմայստերներ Միխայիլ Ուլիբինը, Սեմյոն Դվորիսը, Մաքսիմ Սորոկինը: Այս ակումբը նախորդ օրը հաղթել էր գրոսմայստեր Լեմբիս Օլլի գլխավորած էստոնական «Ռեվալ սպորտ»-ին:

«Հայաստան»-«Խորդա» հանդիպումը ավարտվեց 3-3 հաշվով, բայց լրացուցիչ ցուցանիշներով՝ ավելի բարձր խաղատախտակների արդյունքներով, պայքարը շարունակելու իրավունք ստացան, ավաղ, Ռուսաստանի շախմատիստները:

Հետաքրքիր է, որ սա արդեն երկրորդ դեպքն է, երբ Չելյաբինսկի ներկայացուցիչները գրում են մեր շախմատիստների «եվրոպական հույսերը»: Երեք տարի առաջ, երբ «Հայաստանը» լրացուցիչ մենամարտ էր անցկացնում չեմպիոնների գավաթում խաղալու իրավունքի համար, կրկին Չելյաբինսկի թիմը, որն այն ժամանակ կրում էր «Պոլյոս» անունը, խանգարեց առաջխաղացմանը:

ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Օլիմպիկի» փոխարեն «Մոնակոն»

CHAMPIONS LEAGUE

Ինչպես հայտնի է, ՈՒԵՖԱ-ն զրկել է եվրոպական երկրների չեմպիոնների գավաթակիր եւ Ֆրանսիայի չեմպիոն Մարսելի «Օլիմպիկին» չեմպիոնների գավաթի հերթական խաղարկությանը մասնակցելու իրավունքից, որը պայմանավորված է «Վալանսիեն»-«Օլիմպիկ» հանդիպման հետ կապված ֆուտբոլային սկանդալով: Միեւնույն ժամանակ ֆուտբոլի եվրոպական ասոցիացիան թույլատրել է Ֆրանսիայի ֆեդերացիային «Օլիմպիկին» չեմպիոնների մրցաշարում փոխարինել այլ թիմով: Ֆրանսիայի առաջնությունում 2-րդ տեղը գրավել էր «Պարի Սեն-Ժերմենը», սակայն վերջինս մերժեց առաջարկությունը հանդես գալու չեմպիոնների գավաթի խաղարկությունում, քանի որ որպես Ֆրանսիայի գավաթակիր նախընտրեց մասնակցել գավաթակիրների գավաթի խաղարկությանը:

Մարսելի «Օլիմպիկին» չեմպիոնների մրցաշարում փոխարինելու է Ֆրանսիայի 3-րդ մրցանակակիրը՝ «Մոնակոն»: Այս թիմը նոր մրցաշրջանում զեղազանց հաստատում է ստացել: «Մոնակո» են տեղափոխվել 2 հանրահայտ ֆուտբոլիստներ՝ Բելգիայի հավաքականի առաջատար էնցո Շիֆոն, որը հանդես էր գալիս Իտալիայի «Թորինո» թիմում եւ Ֆրանսիայի հավաքականի նախկին հարձակվող Անդրե Սիմբան («Պարի Սեն-Ժերմեն»): Հիշեցնենք, որ այս թիմի հարձակային բառունգը կազմում էին Յուրի Ջորկաեֆը եւ աշխարհի չեմպիոն Յուրգեն Քլինսմանը, որոնք Ֆրանսիայի նախորդ առաջնության գլխավոր ռմբարկուներից էին: Հիմա էլ Ջորկաեֆը զեղազանց է խաղում եւ 7 խաղում խփելով 3 գնդակ, ռմբարկուների մրցույթում 2-րդ տեղում է: Հիշյալ ֆաբյակը հզոր ուժ է, եւ «Մոնակոն» լիարժեք կերպով կարող է փոխարինել հանրահայտ «Օլիմպիկին»:

ՈՒԵՖԱ-ի մրցաշարում «Մոնակոյին» փոխարինելու է Ֆրանսիայի առաջնությունում 6-րդ տեղը գրաված «Օխեր» թիմը: Դրանով ֆրանսիական ֆուտբոլի համար անախորժությունները կարող են լավարտվել: ՖԻՖԱ-ն էլ ագրեսիվ է տրամադրված եւ բացառված չէ, որ Ֆրանսիայի հավաքականն էլ որակազրկվի: Իսկ դա նշանակում է, որ այս երկրի հավաքականը հանդես չի գա ԱՄՆ-ում հաջորդ տարի կայանալիք աշխարհի առաջնությունում, եւ Ֆրանսիան կարող է զրկվել նաեւ 1998 թ. աշխարհի առաջնությունը կազմակերպելու իրավունքից: ■

Բաժինը վարում է ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Մոսկվա

ՀԱՐԿՄԱՆ ԵՎ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՊԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

Ռուսաստանի նախարարների խորհրդի նախագահ Վիկտոր Չեռնոմիրդինը եւ Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլլերը հինգշաբթի օրը Մոսկվայում երկու երկրների կառավարական ղեկավարությունների բանակցություններից հետո ստորագրեցին համաձայնագրեր կրկնակի հարկումից խուսափելու եւ կառավարական ուղղակի կապի գիծ ստեղծելու մասին: Լրագրողների հետ զրուցելիս Չեռնոմիրդինը հայտնեց, որ բանակցությունների ընթացքում քննարկվել է երկկողմ տնտեսական համագործակցության 12 թեմա, որոնց առթիվ ձեռք են բերվել համաձայնություններ: Երկու երկրների վարչապետները դայմանավորվել են ստեղծել հանձնախմբեր, որոնց հանձնարարություններ կտրվեն երկկողմ տնտեսական համագործակցության հարցերի մշակման համար:

Միաժամանակ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ը սեպտեմբերի 9-ին հաղորդեց, որ Ռուսաստանի նախագահ Բորիս Եելցինը Կրեմլում ընդունել է Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլլերին: Թուրքիայի կառավարության ղեկավարը բարձր գնահատական է տվել նույն օրը Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինի հետ կայացած բանակցություններին: Եելցինի եւ Չիլլերի բանակցությունների կենտրոնում էին երկկողմ քաղաքական ու տնտեսական համագործակցության հարցերը, սահմանակից շրջաններում տիրող իրավիճակը, ինչպես նաեւ հակամարտությունների խաղաղ կարգավորման խնդիրները:

ԻԴ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ

Ուկրաինա

Կրավչուկը համաձայնվեց հանրաքվեին

Լեոնիդ Կրավչուկը, տեղի տալով ընդդիմադիրների ճնշմանը, համաձայնվել է վստահության հանրաքվե անցկացնել եւ խոստացել է դաշտանաթող լինել, եթե քվե չստանա: Կրավչուկը հայտնվել էր քննադատության կրակի տակ Ռուսաստանի հետ ստորագրած համաձայնագրի դատճառով, որով դարտի դայմանների մեղմացման եւ միջուկային վառելիքի դիմաց հանձնվում էին Ուկրաինայում գտնվող միջուկային մարտագլխիկները եւ Սեւծովյան նավատորմը:

Ռուս-ամերիկյան տիեզերական համագործակցություն: Ռուս-ամերիկյան համատեղ «ՆԱՍԱ-Միր» տիեզերական կայանի թաղանթը, ամենայն հավանականությամբ, կդատրաստվի Ռուսաստանում: Ամերիկյան մասնագետների կարծիքով, ռուսական տեխնոլոգիաների ներգրավումը թույլ կտա նախագծի սկզբնական արժեքի 19 մլրդ դոլլարից խնայել 4 մլրդ: Իսկ ռուս-ամերիկյան ներկա տիեզերական համագործակցության հիմնական բեռը դրվի արդեն աշխատող «Միր» կայանի համատեղ շահագործման վրա, որի համար ԱՄՆ 4 տարվա մեջ դետք է տարեկան հատկացնի 100 մլն դոլլար: Այս ծրագրերի մասին հայտնեց Ռուսաստանի տիեզերական գործակալության դաշտոնական ներկայացուցիչը: ԻԴ

Ռուսաստան

Գյուղատնտեսական համալիրը դատրաստվում է գործադուլի

Ռուսաստանի գյուղատնտեսական համալիրի ձեռնարկություններ հայտարարել են նախագործադուլային դատրաստության եւ կառավարության ու խորհրդարանի կողմից մինչեւ սեպտեմբերի 20-ն իրենց դահանջները չկատարելու դեպքում կդիմեն համաճյուղային գործադուլի: Հիմնական դահանջները վերաբերում են համալիրին դետական օժանդակությանը, գնային քաղաքականությանը, դարտավորությունները չկատարողների նկատմամբ դատժամիջոցների կիրառմանը եւ սննդամթերքի ներմուծման դայմանների փոփոխությանը: Այս դահանջները ներկայացվել են ՌԴ Նախարարների խորհրդին, սակայն Գյուղատնտեսական միության ներկայացուցիչների կարծիքով, կառավարությունը որեւէ կերդ չի արձագանքել նրանց: ԻԴ

Industrial trade centre

Երեւանյան գրասենյակն առաջարկում է գործարար մարդկանց բացի Marlboro-ից մեծաքանակ ամեն տեսակ արտասահմանյան ծխախոտ: Հանձնումը Ռուսաստանում:

Մեր հասցեն
Երեւան: «ԱՆԻ» հյուրանոց
301 303
Հեռախոսներ
56 43 97, 59 43 01
59 01 03

Գրասենյակը աշխատում է ժամը
10.00-18.00

PUBLISET

NICA
INVESTMENT COMPANY

ՆԻԿԱ ինվեստիցիոն ընկերությունը հրավիրում է իր ավանդատուներին ընկերության գրասենյակ սննդամթերք ձեռք բերելու:

Կարագ «Հոլանդական» անգլիական արտադրության:
Արժեքը՝
1961-92 թթ. թողարկման թղթադրամներով
1925 ռուբլի,
1993 թ. թողարկման թղթադրամներով
1700 ռուբլի

ՎԱՃԱՌՔԸ ԿԱՏԱՐՎԵԼՈՒ Է ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի-Ց 11-Ը:

Մեր հասցեն Երեւան, Սայաթ-Նովա 7 (Օպերայի դիմաց) Հեռ. 56-79-46

PUBLISET

Մշակույթ

Տագանկայի թատրոնը փակվեց, իսկ դատը շարունակվում է

Հանրահայտ Տագանկայի թատրոնի 30-րդ թատերաշրջանի առաջին օրը դարձավ վերջինը: Սեպտեմբերի 8-ին թատերախմբի ավանդական հավաքում ընթերցվեց թատրոնի հիմնադիր եւ գեղարվեստական ղեկավար Յուրի Լյուբիմովի դերասաններին հասցեագրած նամակը: Այնտեղ ասվում է, որ քանի Նիկոլայ Գուբենկոյի գլխավորությամբ թատրոնին մի խումբ աշխատակիցներ դարտադրած բաժանումը եւ Ջենի երկու երդրդի զավթումը դաշտդանվեցին Մոսխորհրդի եւ Մոսկվայի իրավարար դատարանի կողմից, թատրոնն «անկարող է Ռուսաստանում գործել» եւ դադարեցնում է իր գոյությունը:

Հավաքի ժամանակ ընթերցված Տագանկայի դերասանների (Լյուբիմովի մասին) «Բոլոր նրանց, ում համար բանկ է Տագանկայի թատրոնի արվեստը» դիմումի մեջ նաեւ դնդվում է, որ «Ռուսաստանում Լյուբիմովի թատրոն այլեւս չկա: Տագանկայի թատրոնը հայտարարում է իր փակման մասին»:

Այնուհետեւ երդայր ունեցած Մոսկվայի քաղաքապետարանի մշակույթի կոմիտեի նախագահ Իգոր Բուգաեւը եւ Ռուսաստանի մշակույթի փոխնախարար Կոնստանտին Շչերբակովը հույս հայտնեցին, թե «մշակույթի նախարարությունը եւ Մոսկվայի քաղաքապետարանը թույլ չեն տա այնդիսի եզակի երեւույթի անհետացում, ինչդիսին է Յուրի Լյուբիմովի թատրոնը»: Նրանց խոսքերով, Ռուսաստանի մշակույթի նախարարությունը թատրոնը վերցնում է իր սեփականության տակ, ինչպես էլ այն կոչվի:

Նրանք ուշադրություն դարձրին այն բանին, որ դեռեւս դետք է տեղի ունենա իրավարար դատարանի վճռաբեկ հանձնաժողովի նիստ: Այն նախատեսված է սեպտեմբերի 27-ին:

Մեկնաբանելով դաշտոնական անձանց կեցվքները, Լյուբիմովի թատերախմբի առաջատար դերասան Վենիամին Սմեխովը նշեց, որ «այն ամենը, ինչ նրանք ասացին, այդդես էլ կմնան գեղեցիկ խոսքեր: Փաստն այն է, որ Տագանկայի թատրոնի դատմությունն ավարտվել է, եւ հիմա արդեն խոսքը դերասանների ճակատագրի մասին է»: ԻԴ

Travel Company
"ARMINTERTOUR"
Armenia, Yerevan, str. Akopa Akopjan 2,
tel. 22.24.50

Ամենաէժան ինքնաթիռային չվերթները իրականացնում է «ԱՐՄԻՆՏԵՐՏՈՒՐ» (նախկին «ՈՒՅՈՒՏ») ֆիրման:

Թռիչքները ամեն հինգշաբթի:
Թռիչքի տեւողությունը 2 ժամ:
Կարող եք ձեզ բերել նաեւ հանրահայտ «Սոլնեչնի բերեգ» եւ «Զոլոտիե դեսկի» ուղեգրեր:

Շտապեցեք

Երեւան, Հ. Հակոբյան 2 (Մերգելյան ինստիտուտի դիմաց)
Հեռ. 27-24-50, 27-20-07

PUBLISET

LIMENS ՍՊԸ
LIMENS



Հարմարավետ հանգստի բացառիկ հնարավորություն Հայաստանում

Մեր մասնագետները ձեզ կտրամադրեն ամենաարդի եւ ապահով սարքավորումներ

Բարձրակարգ տեխնոլոգիաների ներդրում

Ուղեգրի տեւողությունները՝ 7, 9, 12 օր: Հոկտեմբերի 23-ից մինչեւ նոյեմբերի 3-ը: Հայերն ընդունվում են մինչեւ սեպտեմբերի 15-ը:

Հեռախոս 57-03-30, 52-12-48, 55-45-58, 55-36-30

PUBLISET

Աշխարհ

Շաղոնիկովը հրաժարվում է դիվանագիտական աշխատանքից

Ինչպես ԻԴ-ին հայտնի դարձավ հավատի աղբյուրներից, ավիացիայի մարշալ Եվգենի Շաղոնիկովը Ռուսաստանի արտգործնախարարությունից հեռ է վերցրել իր թեկնածությունը դիվանագիտական աշխատանքի նշանակվելու համար: Երեքշաբթի օրը Ռուսաստանի ԱԳՆ կոլեգիան հանձնարարել էր Եվգենի Շաղոնիկովին նշանակել Նոր Զելանդիայում Ռուսաստանի դեսպանի դաշտոնում: Միաժամանակ նույն աղբյուրներն ընդգծում են, որ Ռուսաստանի Անվտանգության խորհրդի քարտուղարի դաշտոնից հրաժարական տալու վերաբերյալ մարշալի դիմումը մնում է ուժի մեջ: ԻԴ

Ռուս-ամերիկյան ռազմական համագործակցություն

ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը ստորագրել են ռազմական համագործակցության դայմանագիր եւ ծրագրում են իրագործել մի համատեղ զորավարժություն, որին ամեն կողմից կմասնակցի մեկական բանակային դիվիզիա: Համաձայնագիրը ստորագրվել է Պենտագոնում դաշտդանությանն նախարար Էսփինի եւ Գրաչովի կողմից: Հայտնվել է նաեւ, որ ուղիղ հեռախոսակապ կիրագործվի այս երկու նախարարությունների միջեւ: Գրաչովը առաջարկել է վերանայել եւ որդայում սդառազինությունների կրճատման համաձայնագիրը, դատճառաբանելով, որ իրենց հարավում մեծ անկայունություն կա: ԻԴ

Ս. Պետերբուրգը թմրամոլների քաղաք

Երեքշաբթի օրը տեղի ունեցած մամուլի ասուլիսում Սանկտ Պետերբուրգի եւ մարզի ՆԳՎ թմրամոլության դեմ դայքարի վարչության դետ Անատոլի Գոնչարենկոն հայտնեց, որ օրական քաղաքում վաճառվում են 30 մլն ռուբլու թմրանյութեր: Նրա խոսքերով, այժմ Ս. Պետերբուրգում կան 200 հազար թմրամոլներ, որոնց 2/3-ը 30 տարեկանից երիտասարդ է: Գոնչարենկոն դնդեց, որ թմրանյութերի հիմնական տարածողներն ադրբեջանցիներն են: Ս. Պետերբուրգն այժմ դարձել է միջազգային նարկոմաֆիայի «փող լվանալու» կետ: ԻԴ

Թերթերն ընդունում են ազգի նոր խորհրդանիշերը

Իսլամ Քարիմովի նախաձեռնությամբ սեպտեմբերի 8-ից սկսած Գերագույն խորհրդի եւ կառավարության թերթերն ազգային դրոշի եւ զինանշանի կողքին տդում են Լենկ Թեմուրի՝ միջնադարյան հայտնի նվաճողի դատկերը: Ինչպես խմբագրական հոդվածում նշել է այդ հրատարակությունների գլխավոր խմբագիր Անվար Ջուրաբաեւը, զորավարը «դարձել է ազգի խիղճը»: Նա հատկ ընդգծել է Թեմուրի այն ասացվածը, թե «Մենք ազգերից ամենահինն ու ամենամեծն ենք, բյուրեղի գլուխն ու սկզբների սկիզբը»: Փոխվել է նաեւ թերթերի նշանաբանը. այժմ տդվում է Իսլամ Քարիմովի հայտնի «Ուզբեկստանը մեծ ադագայով երկիր է» ասացվածը: ԻԴ

Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863

Apple* Macintosh*
հրատարակչային համակարգը
«Ազգ» թերթի

Azg
armenian daily

Editor
H. AVEDIKIAN / phone: 521635

47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Թերթի ծեւավորման եւ տարատեսակների հեղինակ ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱԲՅԱՆ

ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65 Դասակ 69149 Տիրաժ 36 000 Պատվեր 1592 Ստորագրված է տպագրության՝ 9.9.1993

digitised by A.R.A.R.@